

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՓԱՐԱՔԱՐ ԳՅՈՒՂԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԽՃՈՒՂԻ 29
ՀԱՍՑԵՆՈՒՄ ՍԱՌՆԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ
ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՇՐՋԱԿԱ
ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան – 2024թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ3

1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ6

2 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՎԻՃԱԿԸ.....22

3. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ ԵՎ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ.....43

4. ՄՈՆԻԹՈՐԻՆԳ58

5. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ.....61

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Ներկայացվող սահմանումները և եզրույթները /տերմիններ/ բերվում են ՀՀ բնապահպանական ոլորտի օրենքներից և նորմատիվ փաստաթղթերից:

Շրջակա միջավայր` բնական և մարդածին տարրերի (մթնոլորտային օդ, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ` անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնակավայրերի կանաչ տարածքներ, կառույցներ, պատմության և մշակույթի հուշարձաններ) և սոցիալական միջավայրի (մարդու առողջության և անվտանգության), գործունեների, նյութերի, երեւույթների ու գործընթացների ամբողջությունը և դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջև:

շրջակա միջավայրի վրա ազդեցություն` հիմնադրությամբ փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետեւանքով շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա հնարավոր փոփոխությունները:

նախատեսվող գործունեություն` շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում:

ձեռնարկող` սույն օրենքի համաձայն` փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթուղթ մշակող, ընդունող, իրականացնող և (կամ) գործունեություն իրականացնող կամ պատվիրող պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, իրավաբանական կամ ֆիզիկական անձ:

ազդակիր համայնք` շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն` ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք:

շահագրգիռ հանրություն` փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթղթի ընդունման և (կամ) նախատեսվող գործունեության իրականացման

առնչությամբ հետաքրքրությունն ցուցաբերող իրավաբանական եւ ֆիզիկական անձինք.

գործընթացի մասնակիցներ՝ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններ, ֆիզիկական ու իրավաբանական անձինք, ներառյալ՝ ազդակիր համայնք, շահագրգիռ հանրություն, որոնք, սույն օրենքի համաձայն, մասնակցում են գնահատումների եւ (կամ) փորձաքննության գործընթացին.

հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ.

հողային պրոֆիլ՝ հողագոյացման գործընթացում օրինաչափորեն փոփոխվող և գենետիկորեն կապակցված հողային հորիզոնների ամբողջություն.

խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր.

հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով.

հողի պոտենցիալ բերրի շերտ՝ հողային պրոֆիլի ստորին մասը, որն իր հատկություններով համընկնում է պոտենցիալ բերրի ապարների (բուսականության աճի համար սահմանափակ բարենպաստ քիմիական կամ ֆիզիկական հատկություններ ունեցող լեռնային ապարներ) հատկություններին.

հողածածկույթ՝ երկրի կամ դրա ցանկացած տարածքի մակերևույթը ծածկող հողերի ամբողջությունն է.

հողի բերրի շերտի հանման նորմեր՝ հողի հանվող բերրի շերտի խորությունը (սմ), ծավալը (մ³), զանգվածը (տ).

ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական.

ռեկուլտիվացիոն աշխատանքներ՝ օգտակար հանածոների արդյունահանման նախագծով կամ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության ծրագրով շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված (անվտանգ կամ օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումներ.

պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձաններ՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային եւ բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

1. Ընդհանուր տեղեկատվություններ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

Ձեռնարկող	Գագիկ Գրիգորյան
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն	Ք. Երևան, Բագրատունյաց 14, բն.77
Նախատեսվող գործունեության հասցեն	ՀՀ Արմավիրի մարզ, գ. Փարաքար, Մերձավանի խճուղի 29

1.2 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.3 նախատեսվող գործունեության փորձաքննական գործընթացների վերաբերյալ

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը:

Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

"Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի սահմանումների համաձայն գործունեությունը հանդիսանում է Բ

կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննության:

Բնապահպանական ազդեցության գնահատման սույն հաշվետվությունը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության փուլում:

1.4 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) - Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2007թ.) - կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

ՀՀ Ջրային օրենսգիրք (2002թ.).

Օրենսգրքով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները: Օրենսգրքի նպատակն ազգային ջրային պաշարի պահպանությունն է, օգտագործելի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության պահանջների բավարարման, շրջակա միջավայրի էկոլոգիական կայունության ապահովման, ինչպես նաև սույն օրենսգրքի խնդիրների լուծման համար իրավական հիմքերի ապահովումը:

«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004) - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ

բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ընդունված 23.11.1999 թ.), որը սահմանում է պետական քաղաքանությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ընդունված 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների Հայաստանի Հանրապետությունում պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքանությունը:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը:

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ.

Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

«Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» ՀՀ Օրենքը (28 ապրիլի 1999թ.) - օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքերը՝ քաղաքաշինական գործունեության բոլոր փուլերում քաղաքացիների, հասարակության ու պետության շահերը պաշտպանելու, օրենսդրական ակտերի, ստանդարտների ու կանոնների պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 781 որոշում, որով հաստատվել է ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին

ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնակավայրերի կանաչ գոտիների չափերին եվ տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 2008

թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 1318-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N 71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը:

ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N 72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը,

ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:

ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին». N 64-Ն որոշում:

ՀՀ կառավարության 2011թ-ի սեպտեմբերի 8-ի «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու մասին» թիվ 1396-Ն որոշումը:

ՀՀ կառավարության 2017 թ-ի դեկտեմբերի 14-ի «ՀՈՂԵՐԻ ՌԵԿՈՒՐՏԻՎԱՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԽԱԽՏՎԱԾ ՀՈՂԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ԸՍՏ ՌԵԿՈՒՐՏԻՎԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի N 750-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 1643-Ն որոշումը:



ՀՀ կառավարության 2017 թ-ի նոյեմբերի 2-ի «ՀՈՂԻ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՀԱՆՄԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՈՐՈՇՄԱՆԸ ԵՎ ՀԱՆՎԱԾ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N 1026-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 1404-Ն որոշումը:

1.5 Նախատեսվող գործունեության նպատակը, բնութագիրը և տեխնիկական-տեխնոլոգիական լուծումները

Նախատեսվող գործունեության նպատակը. ըստ Փարաքար գյուղ, Փարաքար Մերձավանի խճուղի 29 հասցեի հողամասի կադաստրային թիվ 26102023-04-0004 վկայականի՝ կառուցապատման համար նախատեսվող հողամասի մակերեսը 1.5931հա է, որից ըստ կառուցապատման նախագծի՝ սառնարանային տնտեսության համար նախատեսված կառուցապատման մակերեսը կազմում է 3024.0քմ: Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է սառնարանային տնտեսություն, ընդհանուր տանիքածածկով, վերգետնյա միահարկ շինություն: Այն նախատեսվում է գյուղատնտեսական բնամթերքների պահպանության համար:



Տեղամասի փաստացի իրավիճակը:



Կառուցապատվող շինության տեղադիրքը ըստ գլխավոր հատակագծի
 Հայցվող տեղամասի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են.
 Հյ. լայն 40°10`09` , Արև. երկ. 44°24`39`

Հողամասի սահմանային կետերի կոորդինատները WGS-84 ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով հետևյալն են.

1. Y =8449860.6842 X =4448519.8864
2. Y =8449769.6522 X =4448489.7162
3. Y =8449765.5588 X =4448498.5655
4. Y =8449748.5380 X =4448501.0435
5. Y =8449744.0482 X =4448469.2589
6. Y =8449733.0775 X =4448470.8561
7. Y =8449708.2243 X =4448474.3193
8. Y =8449691.2270 X =4448479.0104
9. Y =8449692.5981 X =4448492.2609
10. Y =8449686.0124 X =4448491.8251
11. Y =8449681.6455 X =4448557.8173
12. Y =8449683.9348 X =4448557.9687
13. Y =8449705.3936 X =4448559.3887
14. Y =8449718.4380 X =4448556.7939
15. Y =8449743.3569 X =4448592.1134
16. Y =8449746.7305 X =4448579.5586
17. Y =8449771.4591 X =4448592.6933
18. Y =8449801.1777 X =4448619.4674

19. Y =8449805.9414 X =4448622.7761

20. Y =8449805.8250 X =4448627.5748

21. Y =8449821.7185 X =4448620.2500

22. Y =8449822.2672 X =4448615.8843


23. Y =8449858.4880 X =4448535.6828



24. Y =8449854.3867 X =4448533.8306

Նախատեսվող շենքի տեխնիկական ցուցանիշներն են.

Շինության հատակագծումն ունի ուղղանկյունաձև տեսք 42 x 72մ առանցքային չափերով: Կոնստրուկտիվ համակարգը իրականացվում է մետաղական կազմովի կտրվածքի էլեմենտներով (սյուներ) եզրերում 4.0մ մեջտեղում 7.2մ: Տանիքը երկթեք, ծածկույթը սենդվիչ սալերով 10սմ հաստությամբ: Ջրահեռացումը կազմակերպված: Պատերը նույնպես իրականացվում են սենդվիչ սալերով 10սմ հաստությամբ:

Սառնարանային սարքավորումներում օգտագործվելու է ֆրեոն R404A գազը:





Նախատեսվում է տարածքը բարեկարգել, ասֆալտապատել, դեկորատիվ սալապատել և կանաչապատել (սիզախոտով, տեղանքին բնորոշ ծաղիկներով),

Տարածքի կառուցապատումը կատարվելու է համաձայն՝ ՀՀ-ում գործող նորմատիվա-տեխնիկական, նախագծային և շինարարական նորմերին և առկա քաղաքաշինական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Նախապատրաստական աշխատանքներ.

- շինարարական աշխատանքները սկսելու համար նախատեսվում է իրականացնել՝ տարածքի քանդման և հարթեցման աշխատանքներ:

Շինարարական աշխատանքներ.

- քանդման աշխատանքներ,
- շինհրապարակի լուսավորության ապահովման միջոցառումներ,
- մեքենաներով և ձեռքով հողային աշխատանքներ,
- հիմնային աշխատանքներ, գրունտի հետլիցք, տոփանում,
- արտաքին աշխատանքներ՝ կմախքի, պատերի, ծածկերի, տանիքի իրականացում և մեկուսացում,
- ներքին աշխատանքներ՝ միջնորմներ, հատակներ, ենթակառուցվածքներ և այլն,
- ժամանակավոր կոմունիկացիոն և նախապատրաստական աշխատանքներ:

Մինչև շինարարական աշխատանքների սկսելը գործունեության ենթակա տարածքում կատարվելու են հարթեցման աշխատանքներ:

Հաշվի առնելով տեղանքի պայմանները, կազմակերպվելու է անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում՝ ղեկավարվելով ՀՀՇՆ IIIIV. 2008-ի դրույթներով:

Շինարարության փուլում շենքի կառուցապատման համար նախատեսվում է շինարարական հրապարակ, որը կազմում է մոտ 3024.0քառ. մ, որտեղ լինելու են.

- ամբարձիչ՝ 1 հատ,
- ժամանակավոր աշխատասենյակ՝ 1հատ,
- ճաշարան 1 հատ,
- աղբի տարաներ 2 հատ,
- լուսարձակներ 6 հատ,
- հանդերձարան 1 հատ,
- շարժական սան հանգույց (բիոզուգարան)՝ լվացարանով՝ 1 հատ,
- շինարարական ավտոտրանսպորտի ելքի լվացման կետեր՝ 2 հատ,
- շինհրապարակի մուտքի և ելքի մոտ,

• հակահրդեհային վահանակ՝ 1 հատ:

Շինարարության փուլում կառույցն առանձնացվում է ժամանակավոր տեղադրվող վահանակային պատով:

Շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող 1,20X1,50 չափերի շարժական սանհագույցից (բիոզուգարան): Աշխատանքների ավարտից հետո այն ապամոնտաժվելու է: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինհրապարակի տարածքում կատարվելու է մեքենաների անիվների լվացում՝ լվացման հարթակում: Անիվների լվացում պահանջող մեքենաները պետք է անցնեն անիվների լվացման հարթակի միջով՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ:

Շինհրապարակում անիվների լվացումից առաջացած, ինչպես նաև արտադրական հոսքաջրերը միավորվելու են մեկ բակային ջրահեռացման ցանցին: Արտադրական և անձրևաջրերից առաջացող մակերևութային հոսքաջրերը պլաստմասսե վերգետնյա խողովակներով հեռացվելու են դեպի շինհրապարակում տեղադրվող բիոզուգարան:

Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ և հակահրդեհային անվտանգության միջոցներով՝ կրակմարիչներով:

Աղբահեռացում - Շինարարության ընթացքում կառաջանա շինաղբ՝ ընդամենը՝ 1457.0մ³ քանակով: Շինաղբը տեղափոխվելու է համայնքապետարանի կողմից հատկացված մինչև 5կմ հեռավորության վրա գտնվող աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարության ընթացքում կառաջանա 7776կգ/տարի, կենցաղային աղբ: Շինարարության փուլում տեղադրվելու են 2 հատ 1,5X1,0մ³, շահագործման փուլում՝ 4 հատ 1,5X1,0մ³ տարողության աղբարկղեր:

Բարեկարգում և Կանաչապատում - Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում: Բարեկարգման աշխատանքները ներառում են ավազակոպճային աշխատանքներ,

բազալտե եզրաքարերի, բետոնե դեկորատիվ սալիկների տեղադրում և բետոնապատում:

Ազատ տարածքներում՝ մոտ 520.0քառ.մ մակերեսով տարածքի վրա նախատեսվում է իրականացնել կանաչապատում սիզախոտով՝ համատեղված ծաղիկներով և վարդերով:

Ավտոճանապարհները, մոտեցումները շուրջ 60.0քմ մակերեսով կասֆալտապատվեն:

1.6 .Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր.

Ջուր: Շինարարության և շահագործման փուլերում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ խմելու-կենցաղային նպատակով և բնական գազ:

Շինարարության փուլում ջուրն օգտագործվելու է տարածքի ջրցանի, տեխնիկական կարիքների, հողի (գրունտի) խոնավացման և շինանձնակազմի խմելու կենցաղային և անհրաժեշտության դեպքում հրդեհաշիջման համար:

Աշխատողների խմելու և կենցաղային նպատակների համար օգտագործվելու է բերովի ջուր՝ պայմանագրային հիմունքներով: Ջրցանի համար նախատեսվող տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով: Ջուրը լցվելու է տարածքում տեղադրվող 5տ տարողության բաքի մեջ: Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի: Տեխնիկական ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է հրդեհամարման, ջրցանի և անիվների լվացման համար: Շինարարության փուլում աշխատողների քանակը առավելագույն ծանրաբեռնվածության հերթափոխում կազմում է 27 մարդ, որից 5-ը՝ ինժիներատեխնիկական, 22-ը՝ բանվոր:

Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W = (n \times N + n1 \times N1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 5 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³ օր/մարդ

n1– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 22 մարդ

N1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³ օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 318 օր:

W = (5 x 0.016 + 22 x 0.025) x 318 = 200.34մ³ /շին. ժամ. կամ 0,63 մ³/օր:

բ) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U1 = S1 \times K1 \times T,$$

որտեղ՝

S1 – ջրվող տարածքի մակերեսը 3650 մ², (շինհրապարակ, ճանապարհներ)

K1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի և անիվների լվացման ժամանակահատվածը օրերով, 250

(առավելագույնը 250օր, ներառված անիվների լվացումը),

$$U1 = 3650 \times 0.0015 \times 250 = 1368,75 \text{ մ}^3 / \text{շին. ժամ. կամ } 5,475 \text{ մ}^3 / \text{օր:}$$

Անիվների լվացման համար ջրածախսը կկազմի 39.75մ³/շին.ժամ կամ 0.16մ³/օր:

Ընդամենը ջրի սպառումը շինարարության փուլում կլինի 1608.84 մ³ /շին. ժամ:

Հակահրդեհային կարիքների համար ջրի ծախսը հաշվարկված է 5,2լ/վրկ:

Շահագործման փուլում ջրօգտագործումը կիրականացվի պայմանագրային հիմունքներով:

Նյութեր. շենքի կոնստրուկտիվ համակարգը իրականացվում է մետաղական կազմովի կտրվածքի էլեմենտներով (սյուներ) եզրերում 4.0մ մեջտեղում 7.2մ: Տանիքը երկթեք, ծածկույթը սենդվիչ սալերով 10սմ հաստությամբ: Ջրահեռացումը կազմակերպված: Պատերը նույնպես իրականացվում են սենդվիչ սալերով 10սմ հաստությամբ:

Ամրանային ձողերը և կմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն, ինչպես նաև անհրաժեշտ այլ շինարարական նյութերը բերվելու են համապատասխան տրանսպորտային միջոցներով և պահեստավորվելու են շինարարական հրապարակում:

Նախատեսվում է օգտագործել միաձույլ B25 դասի երկաթբետոն: Բետոնանյութը բերվելու է մասնագիտացված կազմակերպության բետոնախառնիչներով:

Բետոնանյութի մատակարարումը կկատարվի այն պարբերականությամբ, որպեսզի ապահովվի շինարարական աշխատանքների անընդհատությունը:

Շինարարության համար նախատեսված բոլոր նյութերն, ինչպես նաև շենքի արտաքին և ներքին հարդարման նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված(լիցենզավորված) կազմակերպություններից:

Տարածքում շինանյութերը պահեստավորվելու է ժամանակավոր շինություններում՝ տակդիրների վրա: Շինարարական հրապարակում շինանյութերը կամ սորուն նյութերը պահեստավորվելու են ծածկի տակ:

Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ և սարքավորումներ. գործունեության կատարման շինարարության փուլում օգտագործվող հիմնական տեխնիկա-տրանսպորտային միջոցներն են.

- 4 հատ ավտոինքնաթափ
- 1 հատ բուլդոզեր
- 0,5մ³ շերեփով 1 հատ էքսկավատոր
- 1 հատ ոչ ինքնաթափ
- 1 հատ ավտոամբարձիչ՝ 25 տ բեռնատվության
- 1 հատ բետոնի պոմպ
- 4 հատ բեռնատար կամազ
- եռակցող և էլեկտրական այլ գործիքներ:

Շինարարական աշխատանքների՝ բեռնման-բեռնաթափման ժամանակ օգտագործվող բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտներին կամ տեխնիկական պայմաններին, համաձայն ՇՆ և Կ III-4-80* պահանջներին:

Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա 5⁰-ից ոչ ավել թեքություն:

Շինտեխնիկան լինելու է Կապալառու ընկերության սեփական տեխնիկան կամ անհրաժեշտության դեպքում վարձակալվելու են այլ կազմակերպություններից:

Մեքենաները կայանվելու են գործունեության տարածքում՝ շինհրապարակում:

Շինարարական տեխնիկայի և սարքավորումների կայանման վայրերում նախատեսվում է ավազի կամ մանրախճի փռում՝ վառելիքի կամ քսայուղերի հնարավոր արտահոսքը հողային և ջրային ռեսուրսներ կանխելու նպատակով: Աղտոտված ավազը կամ մանրախճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և փոխարինվելու է նորով:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:

1.7. Ժամանակացույց.


Շենքի կառուցման շինարարական աշխատանքները տևելու են մոտ 10 ամիս: Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվող աշխատանքները ըստ ժամանակահատվածների ներառված են ժամանակացույցում:

N	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱԿ	ԸՆԴՀԱՆՈՒՐ 10 ԱՄԻՍ												
		1	2	3	4	5	6	7	8	9	10			
1	Նախապատրաստական աշխատանքներ	■												
2	Բողային աշխատանքներ	■	■											
3	Ե/Ք հիմքերի նախապատրաստական աշխատանքներ		■	■										
4	Ե/Ք ժապավենածև հիմքերի կառուցում		■	■	■									
5	Բետոնե աշխատանքների իրականացում		■	■	■	■								
6	Ե/Ք սյունակալների կառուցում		■	■	■	■	■							
7	Մետաղական շրջանակների մոնտաժում				■	■	■	■	■					
8	Միաձույլ ե/բետոնե սալերի բետոնացում				■	■	■	■	■	■				
9	Միաձույլ ե/բետոնե սալերի հարդեցնող "տոպինգի" շերտ				■	■	■	■	■	■	■			
10	Սենդվիչ-սալերով պատերի մոնտաժում				■	■	■	■	■	■	■			
11	Սենդվիչ-սալերով ծածկի մոնտաժում					■	■	■	■	■	■	■		
12	Սենդվիչ-սալերով միջնորմների մոնտաժում					■	■	■	■	■	■	■		
13	Բարեկարգման աշխատանքներ						■	■	■	■	■	■	■	
14	Բարեկարգման աշխատանքներ							■	■	■	■	■	■	■

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՎԻՃԱԿԸ

2.1 ՏԵՂԱԴԻՐՔԸ և ԼԱՆԴՇԱՖՏԸ

Արմավիրի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության արևմտյան հատվածում: Այն Հայաստանի ամենաբարձր բնակեցված մարզն է, բայց տարածքով՝ ամենափոքր: Մարզը զբաղեցնում է 1231 կմ² տարածք, ՀՀ տարածքի 4.1 %-ը, իր մեջ ընդգրկում է Արմավիրի, Էջմիածնի և Բաղրամյանի տարածաշրջանները: Մարզկենտրոնը Արմավիր քաղաքն է:



Մարզը հյուսիսից սահմանակից է ՀՀ Արագածոտնի մարզին, արևելքից՝ մայրաքաղաքին, հարավ-արևելքից՝ ՀՀ Արարատի մարզին և արևմուտքից՝ պետական սահմանով, սահմանակից է Թուրքիային: Մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակություն ունեցող ավտոխճուղիներ՝ Երևան-Արմավիր, Երևան-Քարակերտ և Երևան-Գյումրի, ինչպես նաև Երևան-Թբիլիսի երկաթուղին:

Մարզում է գտնվում Արաքս գետի միջին հոսանքում կառուցված առայժմ միակ ավտոճանապարհային կամուրջը (Մարգարա գյուղի մոտ), որը հանրապետությունը միացնում է Թուրքիային:

Ռելիեֆը զբաղեցնում է Արարատյան ֆիզիկա-աշխարհագրական շրջանի հյուսիս-արևմտյան մասը (800-1000մ բացարձակ բարձրությունները)՝ հյուսիս – արևմուտքից հարավ-արևելք ընդհանուր թեքությամբ ընդգրկում է Արարատյան գոգավորության հյուսիս-արևմտյան, Արաքսի ձախափնյա մասերը և Արագած լեռնազանգվածի հարավ-արևմտյան նախալեռնային ստորոտները: Մարզի ռելիեֆը տափարակ, գետալճային, չոր նստվածքներից կազմված, տեղ-տեղ ալիքավոր մակերևույթով տարածք է:

Լանդշաֆտային գոտին կիսաանապատային է՝ անապատային տեղամասերով:

Տարածաշրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին պլիոցենային և պլեյստոցենային, ստորին-վերին չորրորդական բազալտները, տուֆերը և տուֆաբեկչիաները, լճա-ալուվիալ նստվածքները, որոնք ծածկված են ավելի երիտասարդ ալյուվիալ-պրոլյուվիալ-դելյուվիալային նստվածքներով, հիմնականում կավավազներ, ավազակավեր, ավազներ, կոպճա-մանրախճային նստվածքներ:

Տարածաշրջանում արմատական ապարներից տարածված են բազալտները և տուֆերը:

ՀՀ Արմավիրի մարզը հանրապետությունում առանձնանում է իր զարգացած գյուղատնտեսությամբ և արդյունաբերությամբ: Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են, ինչպես բուսաբուծության (բազմամյա տնկարկներ, բանջարեղեն), այնպես էլ անասնաբուծության զարգացման համար:

Նախատեսվող գործունեության ենթակա տարածքում ռելիեֆը հարթ է, բացարձակ նիշերը տատանվում 860,6-862,9 մ սահմաններում:

Տարածքում առկա են 1725.4քմ մակերեսով արտադրամաս, 67.4քմ մակերեսով ավտոտնակ, 17.5քմ մակերեսով պահակատուն, 333.3քմ մակերեսով արտադրամաս,

37.3քմ մակերեսով էլ. Ենթակայան, 40.5քմ մակերեսով պարիսպ, 52.4քմ մակերեսով ծածկ, 344.5քմ մակերեսով ծածկ:

Հողամասը առանձնացված է ցանկապատով:

2.2. ԿԼԻՄԱՆ

Արարատյան հարթավայրը, որին վերաբերում է և Արմավիրի մարզի տարածքը, հանրապետության ամենամեծ կլիմայական գոտին է և հանդիսանում է Հայկական բարձրավանդակի ցածրադիր և պարփակ մասերից մեկը: Կլիման չոր է, խիստ մայրցամաքային, բնորոշվում է սառը ձմեռներով և շոգ ամառներով, ինչպես նաև արևափայլի երկարատևությամբ (տարեկան՝ միջինը 2578 ժամ):

Ձմեռը, այս տարածքում, բնութագրվում է չոր, քիչ ձյունոտ և ցուրտ եղանակներով, հունվարին օդի միջին ջերմաստիճանը -4.2°C : Գարունը երկարատև է, տաք, խոնավ: Ամառը նույնպես երկարատև է, շոգ, չոր, պարզ եղանակների գերակշռությամբ, հուլիս ամսին օդի միջին ջերմաստիճանը 25.5°C է (առավելագույնը 41°C): Աշունը բնորոշվում է երկարատև չոր, մեղմ և արևոտ եղանակով:

Տեղումների տարեկան քանակությունը կազմում է 300մմ.:

Օդի ջերմաստիճանը.

Օդ. կայանի անվանումը	Բարձ.ծովի մակարդակից. մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների. °C												Միջին տար. °C	Բաց. նվազ. °C	Բաց. առավ. °C
		I	II	III	IV	V	VI	VII	VII I	IX	X	XI	XII			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Երևան Ագրո	942	-4,2	-1,2	5,2	12,3	17,0	21,6	25,5	25,3	20,6	13,3	5,6	-0,8	11,7	-30	41

Օդի հարաբերական խոնավությունը

Օդ. կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	ըստ ամիսների.												Միջին տար. %	Միջին ամսական ժամը 15-ին	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		Ամեն. ցուրտ ամսվա %	ամենա շոգամսվա, %
1	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Երևան "Ագրո"	78	74	64	58	58	51	45	45	49	61	74	79	61	62	33

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը.

Օդ. կայանի անվանումը	միջին ամսական Տեղումների քանակը _____, մմ օրական առավելագույն												Ձնածածկույթ			
	ըստ ամիսների.												Տար-կան	Առավ տասնօրյա բարձ-ը, սմ	Տարվա ձնածածկույթի քան-ը	Չյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII				
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Երևան "Ագրո"	22	24	31	41	46	27	16	8	11	27	26	23	302	46	41	113
	20	26	33	25	40	25	21	24	29	33	23	24	40			

Քամիները.

Անվանում	Միջին արագությունը, մ/վ (տ.Պ. Կառ) (տ.Պ. Կառ)	Սահմաններ	Կրկնելիությունը, % ըստ ուղղությունների								Անհողմո- թունների կոնցենտրացիան	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (>15մ/վ)օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում		
			Միջին արագությունը, մ/վ												20	50	100
			Հյուսիսային	Հյուսիս-Արեւելյան	Արեւելյան	Հարավ Արեւելյան	Հարավ	Հարավ-Արևմտյան	Արևմտյան	Հյուսիս Արևմտյան					12	13	14
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Երևան "Զվարթնոց"	917,5	հունվ	14	22	8	9	15	13	12	7	66	0,8	2.1	46	21	22	23
			2,2	2,8	2.3	2.6	2.4	2,2	2,7	2.4							
		ապրիլ	11	25	10	13	17	10	9	5	21	2.7					
			3.5	3,7	3.1	3.8	3.2	3,5	4.2	3.3							
		հուլիս	17	31	8	11	16	8	5	4	16	3.8					
			6.4	6,5	3.1	2,9	2.7	2,8	3.0	3.5							
հոկտ	13	27	10	12	17	9	7	5	41	1,6							
	2,9	3.2	2.6	2,7	2,5	2,6	3,2	2.7									

2.3 ՀՈՂԵՐԸ

Հողերի ձևավորման պրոցեսն ընթանում է հրաբխային ապարների բազալտների, տուֆերի, հողմնահարման նյութերի վրա: Տարածաշրջանում այդ ապարների վրա ձևավորվում են կիսաանապատային գորշ հողեր: Շրջանում հողային ծածկույթը ներկայացված է կիսաանապատային գորշ (դռեր) և գետահովտադարավանդային հողերով: Կիսաանապատային գորշ հողերը ձևավորվել են տեղակուտակ, տեղակուտակ-ողողաբերուկային խճային և խճաբեկորային կարբոնատային մայրտեսակների վրա: Այս հողերը ունեն հիմնականում կավավազային մեխանիկական կազմ, բավականաչափ կմախքային զանգվածի պարունակությամբ: Ստրուկտուրան փոշեհատիկային կամ վառողանման է, ջրակայուն ագրեգատների քանակը չի գերազանցում 30-35%: Առանձին տեղերում հողի խորը շերտերում հաճախ բավական քանակությամբ ջրալույծ աղեր են կուտակվում (մինչև 1-1.5%), որոնք գլխավորապես ներկայացված են CaSO_4 , MgSO_4 և այլ աղեր:

Հողերի բնական տիպերի տարածման քարտեզ



Պայմանական նշաններ

Հողերի անվանումները

- 5 Լեռնաշագանակագույն
- 6 Գորշ կիսառանապատային
- 7 Ոռոգելի մարգագետնային գորշ, գետահովտադարավանդային
- 8 Հիդրոմորֆ աղուտ-ակալի

Ստորև աղյուսակում ներկայացված են գորշ հողերի քիմիական հատկությունները:

Խորությունը, սմ	Հումուս, %	Ընդհանուր, %	CO ₂ , %	CaSO ₄ , %	Կլանված հիմքերի գումարը, մ.էկվ 100գ հողում	P ^H -ը ջրային քաշվածքում
0-8	2.10	0.19	1.3	0.05	22.0	8.0
8-21	1.81	0.132	4.7	0.08	30.5	8.3
21-32	1.55	0.115	10.6	0.5	23.6	8.2
32-65	0.87	0.088	15.5	0.8	18.3	8.1
65-140	0.22	-	2.2	42.1	-	7.3

Գետահովտադարավանդային հողերի առաջացումը կապված է մշտապես հոսող գետերի գործունեության հետ, գետափերի հարթ տարածություններում: Ունեն պարզ շերտավոր կառուցվածք, մեծ հզորություն, թեթև մեխանիկական կազմ (ավազային, կավավազային) և հատիկակնձկային ստրուկտուրա: Հումուսի պարունակությունը 1.5-2-ից մինչև 4-6%: Հողային լուծույթի ռեակցիան հիմնականում չեզոք է կամ թույլ հիմնային: Կլանման տարողությունը մեծ չէ (15-25 մգէկվ 100գ հողում), կլանված կատիոնների կազմում գերակշռողը կալցիումն է:

Հայցվող տեղամասում հողաբուսական շերտի ծավալները չնչին են, վերոգրյալ արդեն նշվել է, որ հայցվող տարածքն հանդիսանում է արդյունաբերական տարածքի

մաս, որտեղ հողերն ըստ նպատակային նշանակության արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության են, ըստ հողատեսքի՝ արդյունաբերական օբյեկտների:

Համաձայն ՀՀ կառավարության 15.04.2021թ-ի թիվ 600-ն որոշման՝ սառնարանային շինությունը դասակարգվում է արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական շենքերի, շինությունների ցանկում:

2.4 ՋՐԱՅԻՆ ԱՎԱԶԱՆԸ

Արմավիրի մարզը հիդրոերկրաբանական տեսակետից գտնվում է Արարատյան արևելյան ջրավազանում: Ստորերկրյա ջրերը պատկանում են լճագետային գոյացություններին և ճաքճքված անդեզիտա-բազալտներին: Ստորերկրյա ջրերի սնուցումը իրականանում է հիմնականում Արագած սարի հարավային լանջերից հոսող գետերի ենթահունային ջրերի հաշվին, ինչպես նաև միջլավային ջրերի հոսքի միջոցով: Ճնշումնային հորիզոնը տեղադրված է 150-200մ հասնող հավասար խորություններում, ունի բացասական ճնշում (հոսք): Հայցվող տարածքում հանդիպում են նաև գրունտային ջրեր: Նրանք պատկանում են այլուվիալ-դելյուվիալ, պրոլյուվիալ նստվածքներին և սնվում են մակերևութային հոսքի, մթնոլորտային տեղումների, ենթահունային ջրերի և արտեզյան հորատանցքերի արտանետման ջրերից: Նրանք տարածքում հիմնականում հանդիպում են 6-7մ խորության վրա, իսկ տեղ-տեղ մինչև 5-5.5մ-ը:

Գրունտային ջրերը առավելագույն մակարդակի հասնում են ապրիլ-մայիս ամիսներին, իսկ նվազագույնի՝ օգոստոս-նոյեմբեր ամիսներին:

Մարզն առանձնապես հարուստ չէ ջրային ռեսուրսներով. մարզում է գտնվում հանրապետության ամենացածրադիր լիճը՝ Այդր (Ակնա) լիճը, որը զբաղեցնում է 50հա մակերես, ունի 2մ խորություն, ձագարաձև ուրվագիծ և ստորերկրյա սնում:

Միակ գետը, որ սկսվում է մարզի սահմաններում Մեծամորն է (Սևջուրը), որը սկիզբ է առնում Այդր լճից: Մեծամորի միակ խոշոր վտակը Քասախն է: Թուրքիայի

հետ սահմանը անցնում է Արաքս գետով: Ռեսուրսների պակասը հիմնականում լրացվում է ստորջրյա ռեսուրսներով: Մեծամորի միակ խոշոր վտակը Քասախն է:

Շրջանի հիմնական ջրային երակը Քասախ գետն է: Երկարությունը 89 կմ է, ավազանի մակերեսը՝ 1480 կմ²:

Քասախի ակունքները երկու փոքրիկ գետակներ (առվակներ) են, որոնցից մեկն սկսվում է Արագածից, իսկ մյուսը՝ Փամբակի լեռնալանջերից: Նրանք երկուսն էլ մեծ մասամբ հոսում են հարթ մարգագետիններով և ապա, միանալով միմյանց, առաջացնում Քասախ գետը: Քասախը վերին հոսանքում դանդաղահոս է և սակավաջուր, իսկ միջին հոսանքում դառնում է բավական ջրառատ ու արագահոս: Գետաբերանային մասում նա բաժանվում է մի քանի բազուկների և թափվում Սև ջուր: Ստորին հոսանքում՝ Արարատյան դաշտի սահմաններում, Քասախի ջրերը գրեթե ամբողջովին օգտագործվում են շրջակա գյուղերի ցանքատարածությունները և այգիները ոռոգելու համար:


Քասախի մեջ թափվող վտակներից ջրառատը Ամբերդն է: Քասախի ջրերը ամբարվում են Ապարանի ջրամբարում և օգտագործվում ոռոգման նպատակով:

Հրազդանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 20 դիտակետում:


Հրազդանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 20 դիտակետում: Քասախ գետի ջրի որակը Ապարան քաղաքից վերև հատվածում հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Ապարան քաղաքից ներքև ջրի որակը հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Աշտարակ քաղաքից վերև և ներքև հատվածներում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), գետաբերանում ջրի որակը հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս): Գեղարոտ գետի ջրի որակը Արագած գյուղից վերև հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Շաղվարդ գետի ջրի որակը Փարպի գյուղից ներքև հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Հրազդան գետի ջրի որակը Քաղսի գյուղից ներքև, Արգել գյուղից ներքև, Արգնի ՀԷԿ-

ից վերև հատվածներում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Գետառ գետի ջրի որակը գետաբերանում հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Մարմարիկ գետի ջրի որակը Հանքավան գյուղից վերև հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանում՝ հոկտեմբերին և նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս): Ծաղկաձոր (Տանձաղբյուր) գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), Ծաղկաձոր քաղաքից ներքև՝ հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին՝ «վատ» (5-րդ դաս):





Գծապատկեր 57. Հրազդան գետում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 58. Հրազդան գետում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները

2.5 ԲՈՒՄԱԿԱՆ և ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՆՉ

Արմավիրի մարզի տարածքում տարածված են ցածր բարձրության (մինչև 1000մ ծովի մակերևույթից բարձր) հարթավայրերին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ: Սակայն այստեղ հանդիպում են նաև արտազոնալ բնակավայրերին (քարաթափեր, ցանքեր, այգիներ, բնակավայրեր) բնորոշ տեսակներ, որոնցում տարածված են 113 տեսակ ողնաշարավոր կենդանիներ (որոնցից 82-ը՝ հանդիպում են նաև արտազոնալ բնակատեղերում), այդ թվում՝ 28 (20) կաթնասուն, 67 (41)՝ թռչուն, 15 (8)՝ սողուն և 3 (3)՝ երկկենցաղ: Կաթնասունները առավել կերպով ներկայացված են կրծողներով, 13 որոնց մի մասը վարում է ստորգետնյա կենսակերպ: Թռչունները ներկայացված են բաց

տարածքներին բնորոշ տեսակներով: Սողունները և երկկենցաղները փոքրաքանակ են: Գարնան և աշնան սեզոններին այստեղ հանդիպում են բազմաթիվ չվանցող տեսակներ:

Մարզի տարածքի դոմինանտ և բնորոշ տեսակներից կարելի է նշել Հայաստանում ամենուրեք տարածված *Crocidura* (սպիտակատամիկ), *Vulpes vulpes* L. (աղվես), *Cricetus auratus* Nat. (զերմանամուկ), *Mucrotus arvalis* Pall. (դաշտամուկ), *Perdix perdix* L. (կաքավ), *Grus grus* L. (կոռունկ) և այլն:

ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Բուսական աշխարհը ներկայացված է Երևանյան ֆլորիստական շրջանին:

Տարածաշրջանի հողերը տիպիկ գորշ կիսաանապատային են, աղքատ աննդանյութերով, հարուստ կարբոնատներով, սակավագոր, կավավազային, կմախքային զանգվածների մեծ պարունակությամբ, շերտաթեփուկավոր կամ փոշեհատիկային կազմությամբ, քարքարոտությամբ, որի հետևանքով էլ բույսերի աճն ու զարգացումը ընթանում է զգալի դժվարություններով: Հազարամյակների ընթացքում արհեստական ոռոգման տարբեր տեսակի ագրոմիջոցառումների պարագայում Երևանի տարածաշրջանում առաջացել են կուլտուր-ոռոգելի զգալի հողատարածքներ, որոնք վերածվել են տարբեր տիպի փարթամ կուլտուրական լանդշաֆտների:

Մարդու գործունեության զարգացմանը զուգընթաց (հողերի գյուղատնտեսական օգտագործում, անասունների արածացում, անտառահատում, ոռոգում և այլն) որպես կանոն կրճատվում է լանդշաֆտային գոտու տեսակների ինչպես կազմը, այնպես էլ քանակը՝ ընդհուպ մինչև որոշ տեսակների իսպառ վերացումը: Մասնագետների կարծիքով այսօր պահպանության կարիք ունի ֆլորայի տեսակների կեսը:

Տարածքներին բնորոշ են հիմնականում կիսաանապատային բուսականության պետրոֆիլ տարբերակները, օշինդրա-էֆեմերային և հալոֆիլ, պսամոֆիլ անապատային բուսատեսակներով:

2.7 ՍԵՅՍՄԻԿ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Համաձայն Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի N 24-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 102-Ն հրամանով հաստատված շինարարական նորմերի՝ Փարաքար բնակավայրը գտնվում է սեյսմիկ I զոտում, որի բնորոշ է 0.3 հորիզոնական արագացումներ:


2.8 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴԻ ՈՐԱԿԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից:


Մթնոլորտային օդի ամենամոտ կայանները գտնվում են Երևան քաղաքում: Երևան քաղաքում կատարվում են փոշու*, ծծմբի երկօքսիդի**, ազոտի երկօքսիդի, և գետնամերձ օդոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 45 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան:

2023 թվականի 4-րդ եռամսյակում մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան գերազանցել է ՄԹԿ-ն. Գյումրիում և Ալավերդիում՝ դեկտեմբեր ամսին, Հրազդանում՝ նոյեմբերին:


2023 թվականի 4-րդ եռամսյակում Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները:



Գծապատկեր 13. Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոքր միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 14. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 15. Երևան քաղաքի մթնոլորտային օդում գնտամեթան օդանի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

2.9 ՊԱՏՄՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ և ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ և ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ.

ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար գյուղում գտնվում են ՀՀ կառավարության 15.03.2007թ-ի թիվ 385-ն որոշմամբ հաստատված ՀՀ պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների հետևյալ ցանկը:

1	ԲՆԱԿԱՏԵՐԻ	Ք.ա. 1 հազ.	գյուղի հվ մասում, «Զվարթնոց» օդանավակայանից 0.5 կմ ամ, այգիների մեջ
2	ՀՈՒՇԱՂԲՅՈՒՐ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ՋՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1943 թ.	գյուղի մեջ
3	ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ՋՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1986 թ.	գյուղի մեջ

ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը: ՀՀ Արմավիրի մարզում են գտնվում բնության հետևյալ հուշարձանները.

1. ջրագրական հուշարձաններ`

1	«Մեծամոր» լիճ	Արմավիրի մարզ, Տարոնիկ գյուղից մոտ 3 կմ հարավ
---	---------------	---

2. Կենսաբանական հուշարձաններ

1.	«Ավազաքեր (պսամոֆիլ) բուսականություն»	Արմավիրի մարզ, քաղ. Վաղարշապատ, Զվարթնոց տաճարի մոտ
2.	«Ջրաճահճային բուսականություն»	Արմավիրի մարզ, Մեծամոր լիճ

Հայցվող, ինչպես նաև հարակից տարածքները ներառված չեն բնության հատուկ պահպանվող տարածքում: Բնության հատուկ պահպանվող տարածքներից

ամենամոտ գտնվողը **Որդան կարմիր** պետական արգելավայրն է՝ բնության հատուկ պահպանվող տարածք, Հայաստանի Հանրապետության 24 արգելավայրերից մեկը:

Կազմավորվել է 1987-ին, ՀՀ Արմավիրի մարզում՝ Արարատյան դաշտում, Արգավանդ, Արագափ և Ալաշկերտ գյուղերի միջև՝ ծովի մակարդակից 900-950մ բարձրություններում, ունի 219.9հա տարածք (ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 20-ի 1371-Ն որոշում) : Այստեղ պահպանության տակ են որդան կարմիրը և նրա հիմնական կերաբույսերը՝ աղաղիմացկուն որդանխոտը և հարավային եղեգը:

2.10. ՄՈՑԻԱԼ- ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ



ՀՀ Արմավիրի մարզը, որպես առանձին վարչատարածքային միավոր, ձևավորվել է 1995 թվականի դեկտեմբերի 4-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքով Արմավիրի, Էջմիածնի, Բաղրամյանի նախկին շրջանների բազայի վրա:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի տարածքը -1230.952 քառ. կմ (123095.2 հա), կամ ՀՀ տարածքի 4.2%:

Գյուղատնտեսական նշանակության հողատարածքը – 97007.0հա այդ թվում՝ վարելահողեր - 40271.7 հա:

Մարզկենտրոնը - Արմավիր քաղաք:

Քաղաքային համայնքներ – 3

Գյուղական համայնքներ – 94

Բնակչության թվաքանակը - 284.5 հազ. մարդ,

այդ թվում՝ քաղաքային - 101.7 հազ. մարդ (35.8 %)

գյուղական - 182.8 հազ. մարդ (64.2 %):

Մարզը բնակչությամբ միատարր, հիմնականում բնակեցված է հայերով: Ազգային փոքրամասնություններից մարզում բնակվում են ասորիներ, քրդեր և քիչ քանակությամբ ռուսներ:

Արմավիրի մարզը գտնվում է հանրապետության արևմտյան հատվածում: Մարզը հյուսիսից սահմանակից է Արագածոտնի մարզին, արևելքից՝ մայրաքաղաքին, հարավ-արևելքից ՀՀ Արարատի մարզին, արևմուտքից՝ պետական սահմանով սահմանակից է Թուրքիային:

Արմավիրի մարզը տարածքի մեծությամբ ամենափոքրն է Հայաստանի Հանրապետությունում: Այստեղ է գտնվում Արաքս գետի միջին հոսանքում կառուցված առայժմ միակ ավտոճանապարհային կամուրջը /Մարգարա գյուղի մոտ/, որը հանրապետությունը միացնում է Թուրքիային: Սահմանի երկարությունը 130.5 կմ է Թուրքիայի հետ, որն ընդգրկում է 8 համայնք՝ 34.3 հազար բնակչությամբ կամ մարզի բնակչության 12.1 %-ը:

Մարզի ընդհանուր տարածքը 1230.95քառ.կմ է, կազմում է Հայաստանի Հանրապետության տարածքի 4.2%-ը, մշտական բնակչության թվաքանակը կազմում է 284.5 հազ. մարդ կամ Հայաստանի Հանրապետության բնակչության 8.7%-ը: Գյուղական բնակչությունը՝ 182.8 հազ. մարդ կամ մարզի բնակչության 64.2%, քաղաքայինը՝ 101.7 հազ. մարդ կամ 35.8%: Բնակչության խտությունը՝ 251 մարդ՝ 1 քկմ-ի վրա:

ՀՀ Արմավիրի մարզի տարածաշրջանի ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 595,3 կմ, որից՝ միջպետական նշանակության ճանապարհները - 109.0 կմ, հանրապետական նշանակության ճանապարհները - 96.1

կմ, մարգային նշանակության ճանապարհները - 279.9կմ, համայնքային նշանակության ճանապարհները - 110.3 կմ:

Արմավիրի մարզում գործում են 121 հանրակրթական դպրոցներ, այդ թվում՝ 2 հատուկ դպրոց, 2 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ Արմավիրի "Արարատ" և Էջմիածնի «Գր. Լուսավորիչ» համալսարանները: Մարզում առկա է 98 գրադարան, որից գործում է 21-ը: Մարզի տարածքում գործում է 9 թանգարան և 1 պատկերասրահ: Մարզում առկա են համայնքային ենթակայության 99 մշակույթի տուն, որից լիարժեք գործում են 11-ը, գործում են շուրջ 22 արվեստի, գեղարվեստի, երաժշտական դպրոցներ և մանկապատանեկան մշակութային-հոգևոր 2 կենտրոններ: Մարզում գործում են 58 առողջապահական հիմնարկներ, որոնցից 8-ը մարզպետարանի ենթակայության, համայնքային ենթակայության թվով 50 բուժ. ամբուլատորիաներ ընդգրկում են 43 բուժակ-մանկաբարձական կետեր:

Մարզը հարուստ է պատմամշակութային արժեքներով՝ սբ. Էջմիածին Մայր Տաճարն իր Գանձատնով, Մեծամորի և Զվարթնոցի հնագիտական թանգարանները, Հայաստանի Ազգագրական պետական թանգարանը Սարդարապատում, Զվարթնոց տաճարը, Հայաստանի ստորերկրյա ջրերի ամենամեծ ելքը՝ Այդր լիճը, հին հեթանոսական կենտրոն Բագարանը, «Մուսալեռ» և «Սարդարապատ» հուշահամալիրները: Եզակի հուշարձան է Մեծամորի բլրի լանջին պեղված հինգհազարամյա հնության /բրոնզեդարյա/ մետաղաձուլարանը: Պատմական մեծ արժեք են ներկայացնում ուրարտական քաղաք Արգիշտիխինիլիի ավերակները, դրանց հարևանությամբ Արաքս գետի նախկին հունի ձախ ափին գտնվող հայոց հին մայրաքաղաք Արմավիրը, որը դարեր շարունակ եղել է տնտեսական և մշակութային խոշոր կենտրոն: Քիչ արևմուտք՝ Արաքսի ու Ախուրյանի միախառնման տեղում, նշմարվում են այլ նշանավոր քաղաքի՝ Երվանդունիների թագավորության վերջին մայրաքաղաքի՝ Երվանդաշատի փլատակները:

Արմավիրի մարզում անտառածածկ տարածքները կազմել են 1840հա և շուրջ 1000հա դաշտապաշտպան անտառաշերտեր: 1991-1994թթ. ընթացքում դաշտապաշտպան անտառաշերտերը լրիվ հատվել են, իսկ անտառածածկ

տարածքներից քիչ քանակությամբ մնացել են Արմավիր քաղաքի շրջակայքում և Մարդարապատի հուշահամալիրին կից տարածքներում: Մարզում անտառներ հիմնվել են խորհրդային տարիներին, բնական անտառածածկ տարածքներ մարզում չեն եղել: Մարզում անտառ վերականգման աշխատանքները վերսկսվեցին 1998թ.: Մարդարապատի և Արմավիրի անտառտնտեսությունների տարածքներում հիմնվեցին ավելի քան 60հա, հիմնականում արագած բարդիներ: Անտառ վերականգման աշխատանքները մարզի տարածքում հնարավոր է միայն ոռոգման պայմաններում:

Մարզում լուրջ բնապահպանական հիմնախնդիր է հանդիսանում հողերի էռոզիոն պրոցեսների արագացումը: Հանրապետության Կարմիր գրքում գրանցված հազվագյուտ և անհետացող վայրի ֆլորայի 387 տեսակներից յոթը, ֆաունայի 99 տեսակներից 38-ը աճում և բազմանում են Արմավիրի մարզի տարածքում:

Բուսական և կենդանական աշխարհի հիշյալ ներկայացուցիչների պահպանության հարցերը լուծված չեն: Մարզկենտրոնում գործում է հանրապետությունում եզակի կենդանաբուսաբանական այգին, որտեղ պահպանվող և բազմացվող բույսերի և կենդանիների տեսականին մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Այգին գործում է անհատ բնասեր Թադևոսյանների ընտանիքի ջանքերով և միջոցներով:

Մարզի տարածքում է գտնվում հանրապետությունում միակ <<Որդան Կարմիր>> արգելավայրը: Պահպանության օբյեկտն է Հալոֆիտ անապատը, որի վրա ապրում է հայկական որդան Կարմիրը: Որդան Կարմիրը էնդեմիկ միջատ է, որը 3 հազարամյակ Հայկական լեռնաշխարհի տարածքում օգտագործվել է կարմիր ներկանյութ ստանալու համար: Արգելավայրը գտնվում է շատ աղետալի վիճակում: Մարզի ռելիեֆը տափարակ, գետալճային, չոր նստվածքներից կազմված, տեղ-տեղ ալիքավոր մակերևույթով տարածք է:

Արմավիրի մարզը գյուղատնտեսական ուղղվածության մարզ է, քանի որ գտնվում է հիմնականում Արարատյան դաշտի բարեբեր հողերի վրա: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են մարզի վարչական

տարածքի 78.1%-ը: Մարզում տարիներ շարունակ զարգանում է պտղաբուծությունը, խաղողագործությունը, բանջարաբուծությունը և բուստանաբուծությունը: Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են ինչպես բուսաբուծության /բազմամյա տնկարկներ, բանջարեղեն/, այնպես էլ անասնաբուծության զարգացման համար: Այս բնագավառում հիմնականում զարգացած է խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությունը, խոզաբուծությունը և թռչնաբուծությունը: Մարզում գյուղատնտեսական արտադրությունը հիմնականում կազմակերպվում է 55325 գյուղացիական տնտեսությունների միջոցով:

Մարզում կա գյուղատնտեսական արտադրանքի վաճառքի 5 շուկաներ: Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

Արդյունաբերությունը մասնագիտացված է էլեկտրաէներգիայի, սննդամթերքի, ըմպելիքի, ակոհոլային խմիչքների արտադրության ու շինանյութերի հանքավայրերի շահագործման ուղղություններում: Նախկինում մարզն ունեցել է նաև հզոր արդյունաբերություն, այնպիսի արդյունաբերական զիգանտներ, ինչպիսիքն են եղել պահածոների մի քանի գործարաններ, կահույքի ֆաբրիկաներ, մի շարք ռազմական ուղղվածության գործարաններ:

Այսօր մարզում կան գյուղատնտեսությամբ զբաղվող մանր ու միջին տնտեսություններ, գյուղմթերքներ վերամշակող Արմավիրի <<ՄԱՊ>>, <<Մարդարապատ>>, Էջմիածնի պահածոների գործարաններ: Մարզի տարածքում գտնվում են <<Արմավիր>>, <<Վարդան>> և <<Թալին>> փոքր հիդրոէլեկտրակայանները: Մարզի տարածքում գործում են կարևորագույն նշանակության թվով 150 կազմակերպություններ:

Վերջին տարիներին մարզում զարգանում են ձկնային տնտեսությունները: Մարզում արտադրված ձուկը մեծ պահանջարկ ունի հանրապետությունում: Մարզում թափ է առել շինարարությունը, ամենուր կառուցվում և վերակառուցվում են դպրոցներ, առողջապահական հիմնարկներ և արտադրական փոքր ու միջին ձեռնարկություններ:

Մարզում են տեղակայված հանրապետական նշանակության երկու կարևորագույն կառույցներ՝ ՀԱԷԿ-ը և «Զվարթնոց» օդանավակայանը: Երկրի էկոնոմիկայում Արմավիրի մարզի տեղը և դերը որոշող գլխավոր ճյուղը էլեկտրաէներգետիկան է՝ հանձին Հայաստանում և ամբողջ տարածաշրջանում միակ ատոմային էլեկտրակայանի, որը գտնվում է մարզկենտրոնից ոչ հեռու՝ Մեծամոր քաղաքում, որն էլ կառուցվել է ատոմային կայանին սպասարկելու համար: Տուրիստական ցանցը մարզում այնքան էլ զարգացած չէ, բայց հատկապես այս ոլորտում մեծ հնարավորություններ կան ներքին տուրիզմը զարգացնելու նպատակով՝ կապված Մարդարապատի հուշահամալիրի, Հայոց հնագույն մայրաքաղաքների և այլ պատմամշակութային օբյեկտների մարզում գտնվելու հետ: Մարզն ունի 3 քաղաքային /Արմավիր, Վաղարշապատ, Մեծամոր/ և 94 գյուղական համայնք: Արմավիր քաղաքը (33.6 հազ. բնակիչ) մարզկենտրոնն է, նախկինում՝ Հոկտեմբերյան: Այն Հայաստանի երիտասարդ ու արագ զարգացող քաղաքներից է:

Մարզի ամբողջ տարածքի նկատմամբ կենտրոնական դիրք ունի, գտնվում է Երևան-Վաղարշապատ-Արագած-Գյումրի կարևոր ավտոխճուղու վրա:

Քաղաքը գտնվում է Երևանից 44 կմ դեպի հյուսիս-արևմուտք: Այն հիմնադրվել է 1931թ.-ի հունիսի 26-ին: Այն գտնվում է Երևան մայրաքաղաքից 44 կմ դեպի հյուսիս-արևմուտք: Գտնվել է արգավանդ և բարեբեր Արարատյան դաշտում, միջազգային քարավանային առևտրական ուղիների խաչմերուկում: Ժամանակի ընթացքում քաղաքը դառնում է Ուրարտական պետության վարչատնտեսական կարևոր բերդաքաղաքներից մեկը՝ մրցակցելով Վան մայրաքաղաքի հետ: Քաղաքում գործում է 10 հանրակրթական դպրոց, 4 միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություն, գեղարվեստի, երաժշտական դպրոցներ, շախմատի դպրոց, 12 մսուր մանկապարտեզ, մարզադպրոցներ, «Հոբելյանական» մարզադաշտ, բժշկական կենտրոն, 1 համալսարան, 2 մասնավոր հեռուստաընկերություն, սպարան, կապի հանգույց և լայն հեռախոսակապի ցանց, միջազգային կապի կետեր, կենցաղային այլ կոմունիկացիաներ: Երևան քաղաքի հետ հաղորդակցվում է ավտոճանապարհով և դարասկզբին կառուցված երկաթուղով: Արմավիր քաղաքում

գործում է մասնավոր բուսակենդանաբանական այգի, ուր պահպանվում են վայրի կենդանիների 80 և բույսերի 40 տեսակներ, որոնց 50%ը գրանցված է հանրապետության Կարմիր գրքում:

Վերջին տարիներին լայն թափով վերելք է ապրում առևտուրը, բնակարանաշինությունը, փոքր ու միջին բիզնեսը: Քաղաքի առաջին հատակագծի վրա աշխատել է ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը:

Վաղարշապատ- Էջմիածին քաղաքը (57.36 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 20կմ հեռավորության վրա: Մարզում համայն հայության կյանքում իր բացառիկ նշանակությամբ և առանձնանում է Վաղարշապատ քաղաքը: Բացառիկ է նրա հոգևոր մշակութային նշանակությունը: Այդ առումով Վաղարշապատը ոչ միայն համահայաստանյան, այլև համակայկական կենտրոն է: Շնորհիվ այն բանի, որ այստեղ գտնվում է Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարը: Մայր տաճարին կից գործում է Հոգևոր ճեմարանը, որը Հայ Առաքելական եկեղեցու ծառայողներ է պատրաստում Հայաստանի և Սփյուռքի համար: Քաղաքում գործող արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղն ունի ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը՝ ցեմենտի, կրի և ազդեցման տային իրերի արտադրությունը: Քաղաքում գործում է համալսարան, 14 միջնակարգ դպրոց, 20 մսուր մանկապարտեզ, երաժշտական ու արվեստի դպրոցներ, կինոթատրոն, 2 մշակույթի տուն: Վաղարշապատ քաղաքում գործում է ազգագրական թանգարանը, Հովհանես Հովհաննիսյանի տուն-թանգարանը, Մանուկ Աբեղյանի անվան թանգարանը, նկարիչ-քանդակագործ Խորեն Տեր-Հարությանի անվան պատկերասրահը: Քաղաքում գործում է երկրագործության գիտահետազոտական ինստիտուտը: Այստեղ է կառուցվել առաջին թղթի գործարանը, բացվել առաջին դպրոցը: Քաղաքի կենտրոնի կառուցապատումը ձևավորվել է Կոմիտասի անվան հրապարակով՝ քաղաքապետարանի վարչական շենքի և վանքի համալիրի անսամբլային մասնակցությամբ:

Վաղարշապատ քաղաքն իր ներկայիս վիճակով հանրապետության գեղեցիկ և ինքնատիպ ճարտարապետական կերպար ունեցող քաղաքներից մեկն է: Այն շնորհիվ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դարձել է հանրապետության այցելուների և տուրիզմի ամենահետաքրքիր վայրերից մեկը: Մայր Աթոռ համալիրը, Սբ. Հռիփսիմե, Սբ. Գայանե, Սբ. Շողակաթ, Սբ. Աստվածածին եկեղեցիներն ու քաղաքի ճարտարապետական մյուս կառույցները առանձին շուք են հաղորդում քաղաքին: Մեծամոր քաղաքը (10.3 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 38 կմ հեռավորությամբ: Մեծամոր քաղաքի տարածքը բնակեցված է եղել մ.թ.ա V հազարամյակից մինչև մ.թ. VIII դարը: 1965թ.-ին սկսվել են Մեծամոր ամրոցի դամբանադաշտի պեղումները: Արքունի քաղաքը նշանավոր էր իր աստղադիտարանով, 7 սրբարաններից կազմված տաճարական համալիրով: Ներկայիս Մեծամորը նշանավոր է ՀՀ ատոմակայանով, որը զբաղեցնում է 300հա տարածք, իր մեծությամբ և հզորությամբ միակը Հարավային Կովկասում: 1969 թվականից բանվորական ավանը աճել է և դարձել 10.3հազ. բնակչություն ունեցող քաղաք /1995թ.-ից/՝ իր համալսարանով, դպրոցներով, առողջապահական հաստատություններով, մշակութային ու սպորտային հաստատություններով: Քաղաքն ունի նաև իր եկեղեցին՝ շրջապատված հրաշալի զբոսայգով:

Արմավիրի մարզը հանրապետության գյուղատնտեսական մթերքների արտադրության խոշորագույն մարզն է: Այն ընդգրկում է Էջմիածնի, Արմավիրի և Բաղրամյանի տարածաշրջանները:

Մարզի ընդհանուր հողատարածքը կազմում է շուրջ 124218 հա, այդ թվում՝ գյուղալիտանի հողատեսքերը՝ շուրջ 97 հազ. հա:

Մարզն ունի 3 քաղաքային և 94 գյուղական համայնքներ՝ շուրջ 276300 մարդ մշտական բնակչությամբ:

3. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ ԵՎ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Գործունեության իրականացման ենթակա տարածքը գտնվում է Արմավիրի մարզի Փարաքար բնակավայրի վարչական տարածքում: Նախատեսվող

գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կառաջանան հիմնականում շինարարության փուլում՝ քանդման, հողային աշխատանքների, մեքենաների և շինտեխնիկայի շահագործումից առաջացող ծխագազերի արտանետումների, աղմուկի մակարդակի ավելացման և մեքենաների տեղաշարժի ժամանակ, որոնք կլինեն կարճաժամկետ:

Այն ունենալու է սոցիալական դրական ազդեցություն (աշխատատեղ և բնակչության եկամուտների ավելացում, համայնքի սպասարկման ոլորտի բարելավում):

Սույն հաշվետվությամբ նախատեսվում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ՝ բնապահպանական կառավարման պլան, որոնց ճիշտ կիրառման արդյունքում գործունեության իրականացման հետևանքները շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա կլինեն նվազագույնը:

Շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնք կապված են լինելու օդային ավազան արտանետումների, հողային և ջրային ռեսուրսների աղտոտման, ինչպես նաև տրանսպորտային միջոցների և սարքավորումների աշխատելու ընթացքում հողային և ջրային ռեսուրսների մեջ յուղերի հնարավոր ներթափանցման, աղմուկի մակարդակի բարձրացման, թափոնների կառավարման հետ:

3.1 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ

Գործունեության իրականացման շինարարության փուլում լինելու են օդային ավազան արտանետումներ՝ տրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում ծխագազերի և հողային աշխատանքների(փորման, բեռնման, հարթեցման) ընթացքում, ճանապարհների օգտագործման ժամանակ առաջացող փոշու տեսքով:

Շինարարության փուլում օդային ավազանի հնարավոր աղտոտվածությունը լինելու է կարճաժամկետ և թույլատրելի նորմայի սահմաններում: Շինարարության ընթացքում, հատկապես չոր և շոգ եղանակներին, կատարվելու են շինհրապարակի և ճանապարհի փոշենստեցման աշխատանքներ՝ ջրցան մեքենայով:

Շինարարության փուլում հարակից բնակելի և հասարակական շենքերից բողոքների դեպքում Կապալառուի կողմից կիրականացվի օդի աղտոտվածության գործիքային չափումներ, որոնք կհամեմատվեն Արմավիր քաղաքի նորմերի և ելակետային տվյալների հետ:

Օդային ավազան արտանետումների քանակը մեղմելու, մթնոլորտային օդի որակի վրա հնարավոր ազդեցությունը կրճատելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում անհրաժեշտության դեպքում կատարվելու է գրունտի խոնավեցում և ճանապարհների ջրցան,

- մեքենաները շին. հրապարակ մտնելու և դուրս գալու են մաքուր վիճակում,

- օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում,

- բացառվելու են անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: Այդ նպատակով կատարվելու են պարբերաբար ստուգումներ,

- գործունեության վայր շինանյութերի և սորուն նյութերի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով,

- շինհրապարակում սորուն նյութերը պահվելու են ժամանակավոր ծածկի տակ, ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,

- շինհրապարակը կազմակերպվելու է ցանկապատով,

- բացառվելու է տարածքում թափոնների բաց այրումը:

3.2 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Նախատեսվող գործունեության իրականացման համար նախատեսվում է 1925,մ³ ծավալի հողային աշխատանքներ: Հողային զանգվածն առաջանալու է շենքի հիմքերի, ժամանակավոր կառույցների տեղադրման, ջրամատակարարման և ջրահեռացման, հրդեհաշիջման, գազմատակարարման, էներգամատակարարման համակարգերի կառուցման նախատեսվող աշխատանքներից: Հողային աշխատանքներից հանված հողը՝ հողային գրունտ, շինարարության ընթացքում օգտագործվելու է տարածքի հարթեցման և լիցք անելու համար: Իսկ գրունտները, որոնք կպարունակեն խոշոր քարաբեկորներ, շինադրի հետ կտեղափոխվեն համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

Գործունեության իրականացման հետևանքով հողային ռեսուրսների պահպանությանն ուղղված նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների ընթացքում հողային գրունտն օգտագործվելու է տարածքի հարթեցման և քարեկարգման նպատակով,
- հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրապարակում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,
- շինհրապարակը ապահովված է լինելու արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար,
- շինարարական նյութերը տեղադրվելու են հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա,
- նվազագույնի է հասցվելու շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը,
- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարվելու է տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,

- մեքենաների անիվների լվացումը կատարվելու է անիվների լվացման հարթակում: Բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարվելու է մինչ շինհրապարակից վերջիններիս դուրս գալը:

3.3 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Նախատեսվող գործունեության տարածքն աղքատ է գրունտային ջրերից: Համաձայն երկրաբանական ուսումնասիրությունների՝ տեղամասում փորված հորատանցքներով մինչև 5,4 մետր խորությամբ ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել: Կառուցապատվող տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ: Ամենամոտ ջրային ռեսուրսը Այդր լիճն է, որը գտնվում է մոտ 10կմ հեռավորության վրա: Ուստի մակերևութային և գրունտային ջրերի վրա ուղղակի ազդեցություն չի կանխատեսվում: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները ջրային ռեսուրսներ:

Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու նպատակով նախատեսվում է.

- փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր,

- տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացման հոսքաջրերը ներքին բակային ցանցով ուղղվելու են շինհրապարակում տեղադրված բիոզուգարան,

- անձրևաջրերը և շինարարական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող 1*1*1.5մ չափերի պարզարան,

- պարզարանում մեխանիկական նստեցման հետևանքով առաջացած տիղմը՝ որպես շինաղբ, ժամանակ առ ժամանակ տեղափոխվելու է աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով,

- ջրցանման համար օգտագործվելու է միայն տեխնիկական որակի ջուր և պարզաբանում կուտակված ջուրը,

- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կետերում,

- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում:

Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվելու է.

- շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում առկա բիոզուգարանից,

- բիոզուգարանի մաքրումը կատարվելու է համապատասխան լիցենզիա ունեցող մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

3.4 ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գործունեության ենթակա տարածքը գտնվում է խիտ կառուցապատման գոտում:

Քուսական աշխարհ. Տարածքն արդեն ենթարկված է անտրոպոգեն ազդեցությունների, տարածքը կառուցապատված է, բուսականությունը բացակայում է:

Կենդանական աշխարհ. գործունեության ենթակա տարածքն արդեն ենթարկվել է մարդկային գործունեության ազդեցությանը:

Գործունեության ենթակա և հարակից տարածքներն արդեն կառուցապատված են, ուստի մարդկային գործոնի, երթևեկության՝ մեքենաների շարժի, աղմուկի պայմաններում հնարավոր չի կենդանատեսակների, բնադրավայրերի, միգրացիոն ուղիների, ինչպես նաև ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների և կենդատեսակների առկայությունը:

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է բնակավայրի տարածքում, կենսաբազմազանությանը վտանգ չի սպառնում և բնապահպանական միջոցառումներ չեն նախատեսվում:

3.5 ԹԱՓՈՆՆԵՐ

Գործունեության իրականացման հետևանքով շինարարության փուլում առաջանալու են կոշտ թափոններ.

- շինարարական նյութերի մնացորդներ շինարարական աղբի տեսքով (վտանգավորության դաս IV դաս, ծածկագիր՝ 91200601 01 00 4)՝ 14570.3մ³ ծավալով,

- կենցաղային թափոններ՝ աղբ (ծածկագիր՝ 91200400 01 00 4) կառուցապատման փուլում՝ 7776կգ/տարի, շահագործման փուլում՝ 12600կգ/տարի:

Այս կարգի թափոնները համաձայն՝ ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. դեկտեմբերի 25-ի N 430-Ն հրամանի՝ ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի՝ պատկանում են վտանգավորության 4 դասին:

Շինարարության փուլում շինարարական աղբը կուտակվելու է համապատասխան անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ և տեղափոխվելու է Արմավիրի համայնքապետարանի հետ համաձայնեցված՝ 5 կմ հեռավորության վրա գտնվող աղբավայր:

Շինարարության փուլում կենցաղային աղբը կուտակվելու է 2 հատ 1.5x1.0մ³ մետաղական կամ պլաստմասե աղբահավաք տարողությունների մեջ:

Շինարարական և կենցաղային աղբը պարբերաբար հեռացվելու են մասնագիտական ծառայությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Կենցաղային աղբի հաշվարկները

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M=n*m$$

որտեղ,

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի ծավալն է մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տարի

n – աշխատողների թիվն է

$$M=27*120=3240\text{կգ/տարի:}$$

Շինարարությունը տևելու է մոտ 0.9 տարի, հետևաբար

$M=3240 \cdot 0.9=2916$ կգ/տարի:

Շինհրապարակում շինարարական նյութերի մնացորդները (մետաղական մասեր) և վտանգավոր նյութերը հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից:

Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ է պահվելու թափոնների կուտակումներից, շին հրապարակի տարածքում հստակեցվելու է շին աղբի նախնական կուտակման վայրը, չգերազանցելով նախատեսված բարձրության նորմերը,

- շինարարական թափոնները՝ շինաղբ, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր,

- շինաղբի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկով ապահովված բեռնատարներով, կենցաղային աղբի և շինաղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության,

- շինարարության և շահագործման փուլերում կենցաղային աղբը հավաքվելու է տարածքում տեղադրված աղբարկղերի մեջ և հատուկ աղբահավաք ծառայությունների կողմից մեքենաներով տեղափոխվելու է նախատեսված աղբավայր՝ կենցաղային աղբի տեղափոխման պայմանագրի կնքումից հետո,

- բացառվելու է աղբի կուտակումը շինհրապարակից դուրս՝ այլ բնակելի և հասարակական տարածքներում,

- շինարարական նյութերի մնացորդները(մետաղական մասեր) և վտանգավոր նյութերը և թափոնները հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից:

Շահագործման փուլում առաջանում են բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ, որոնցից են՝ մեքենաներում ու մեխանիզմներում փոխվող օգտագործված յուղերն ու քսայուղերը, մաշված

դետալների փոխարինման ժամանակ առաջացած մետաղի ջարդոնը, մաշված ավտոդոդերը ու կենցաղային աղբը:

Շահագործման փուլում, բացի վերոգրյալ կենցաղային աղբից, առաջանալու են հետևյալ թափոնները.

- Շարժիչների բանեցված յուղեր, 0.29տ/տարի՝
դասիչ՝ 5410020102033
բաղադրությունը՝ նավթ, պարաֆիններ, սինթետիկ միացություններ,
բնութագիրը՝ հրդեհավտանգ է, առաջացնում են հողի և ջրի աղտոտում:
Թափոններն առաջանում են ավտոտրանսպորտային և տեխնիկական

միջոցների շարժիչների շահագործման արդյունքում:

- Դիզելային յուղերի մնացորդներ, 0.15տ/տարի՝
դասիչ՝ 5410030302033
բաղադրությունը՝ նավթ, պարաֆիններ, սինթետիկ միացություններ,
բնութագիրը՝ հրդեհավտանգ է, առաջացնում են հողի և ջրի աղտոտում:
Թափոնները առաջանում են մեխանիզմների շահագործման

արդյունքում:

Օգտագործված յուղերը ու քսուկները հավաքվում են առանձին տարրաների մեջ և հանձնվում վերամշակման կետեր:

- Բանեցված ավտոդոդեր, 0.6տ/տարի՝
դասիչ՝ 5750020213004
բաղադրությունը՝ ռետին, մետաղյա լարեր,
բնութագիրը՝ հրդեհավտանգ է:
Թափոններն առաջանում են ավտոտրանսպորտային և տեխնիկական

միջոցների շահագործման արդյունքում:

Թափոնները հավաքվում և պահպանվում են իրենց համար նախատեսված տարածքներում՝ հետագայում վերամշակող ընկերություններին վաճառելու համար:

- Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան, 50կգ/տարի՝

դասիչ՝ 9211010013012

բաղադրությունը՝ կապար պարունակող ցանցեր, կապարի օքսիդներ, թթուներ, պլաստմասսա,

բնութագիրը՝ թունավոր է շրջակա միջավայրի համար:

Թափոնները առաջանում են ավտոտրանսպորտային միջոցների շահագործման արդյունքում:

Թափոնները հավաքվում և պահպանվում են իրենց համար նախատեսված տարածքներում՝ հետագայում վերամշակող ընկերություններին վաճառելու համար:

3.6 ԱՂՄՈՒԿ ԵՎ ԹՐԹՈՒՄՆԵՐ

Շինարարության ընթացքում աղմուկը և թրթռումները կապված են լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է N2-III-11.3՝ «ԱՂՄՈՒԿ և ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» սանիտարական նորմերով: Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին,
- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործվելու են սարքին վիճակում,
- պարբերաբար ստուգվելու և կարգաբերվելու են տրանսպորտային միջոցների շարժիչները,

- բացառվելու են շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ,
- օգտագործվող շին տեխնիկան և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով,
- պահպանվելու են աղմուկի, վիբրացիայի թույլատրելի նորմերը:

3.7 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված հրդեհների, քամիների, սողանքների, հեղուկ նյութերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և շահագործվող տեխնիկայի վթարների հետ:

Կառույցների հիմքերի փոստրակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ պարտադիր է ինժեներ-երկրաբանի կողմից հիմնափոսի զննումը և համապատասխան մասնագետի (երկրաբան) եզրակացությունը:

Շինարարության փուլում հակահրդեհային պաշտպանության նպատակով նախատեսվում է հակահրդեհային 5տ տարողության ջրի բաք: Տեղադրվելու են տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է տեղեկատվություն շենքի նախագծողի, Կապալառուի և այլ պատասխանատու անձանց (հեռախոսահամար), շինթույլտվության, շինարարության սկզբի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն:

Օդափոխվող և օդամշակման սարքերի տեղադրումն իրականացվելու է ըստ վերջիններիս նշանակության, միկրոկլիմայի պարամետրերի, ըստ շահագործման ռեժիմի, հրդեհային բաժանմունքների և պայթյունահրդեհային վտանգավորության կատեգորիաների:

Շինարարության փուլում գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսված միջոցառումներն են.

- շինհրապարակն ապահովված է լինելու հակահրդեհային միջոցառումների վահանակներով՝ կրակմարիչներով հիդրատներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով,

- շինհրապարակը ժամանակ առ ժամանակ մաքրվելու է հրդեհավտանգ և պայթուցավտանգ թափոններից,

- տեղադրվելու են համապատասխան տարողության ջրի բաք՝ հրդեհաշիջման նպատակով,

- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են,

- տեղադրվելու են ձայնային ազդանշաններ՝ վթարների կանխարգելման համար,

- հեղուկ և վտանգավոր նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

3.8 ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և շահագործվող տեխնիկայի վթարների հետ:

Շինարարության ընթացքում տեղադրվելու են տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է տեղեկատվություն շենքի նախագծողի, Կապալառուի և այլ պատասխանատու անձանց (հեռախոսահամար), շինթույլտվության, շինարարության սկզբի և ավարտի վերաբերյալ:

Շինաշխատանքները կատարվելու են պահպանելով շինարարության ժամանակացույցը և աշխատանքի անվտանգության կանոններն՝ ըստ ՇՆԵԿ-3-480* նորմերի:

Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.

- պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը,

- պահպանվելու է ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-0 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,

- մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների,

- ստուգվելու և ատեստավորվելու են առասանիչ բանվորների գիտելիքները, տեղադրվելու են համապատասխան ցուցանակներ,

- շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացվելու է 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N 87 արձանագրության պահանջներին համապատասխան, աշխատողներն ունենալու են համապատասխան բանվորական արտահագուստ,

- աշխատողներն ապահովված են լինելու 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ և այլն), էլեկտրական սարքավորումների հետ աշխատողները՝ դիէլեկտրիկ գորգով և ձեռնոցներով,

- աշխատողների համար նախատեսվելու է սանիտարական և հանգստի պայմաններ (ժամանակավոր՝ տնակ, հանդերձարան և այլն), որն ապահովված է լինելու անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան, ջեռուցիչ և այլն),

- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրվելու են աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ,

- վերահսկվելու է աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառվելու է գործնետության վայրում խոտանված բեռնիչ սարքերի կուտակումները,
- վերահսկվելու է մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառվելու են մեքենաների կուտակումները, - նվազագույնի են հասցվելու ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,
- ավտոմեքենաները շինհրապարակից դուրս են գալու միայն մաքուր վիճակում՝ շրջակա տարածքը չաղտոտելու նպատակով,
- բացառվելու է ավտոամբարձիչի սլաքի աշխատանքը՝ սահմանազատված սահմանից դուրս,
- բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ օգտագործվող բեռնամբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին,
- տեղադրվելու են լրացուցիչ լուսավորման սարքեր՝ շինհրապարակի լուսավորության համար:

Շահագործման փուլ.

Շահագործման փուլում սառնարանային համալիրը ապահովված է լինելու բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանության միջոցառումներով, որոնց լուծումները նախատեսվել են քաղաքաշինության նախարարի 2006թ. հոկտեմբերի 10-ի N 253-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Մասնավորապես.

- հաշմանդամների պահանջմունքին հարմարեցվող ունիվերսալ, շարժական տարրերով,
- վերգետնյա անցումներն ապահովված է լինելու թեքահարթակներով,
- մուտքը տարածք կահավորված է լինելու տարածքի վերաբերյալ հաշմանդամների համար մատչելի տեղեկատվության տարրերով:

3.9 ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Գործունեության և մոտակա տարածքներում բացակայում են պատմամշակութային արժեք ունեցող պատմամշակութային և բնության հուշարձանները: Ուստի հնարավոր ազդեցությունների մեղմման միջոցառումներ չի նախատեսվում:

Միաժամանակ շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

3.10 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

Շինարարության և շահագործման ընթացքում բացվելու են նոր աշխատատեղեր: Շինարարության փուլում աշխատելու է 32 մարդ, որից 5 մարդ ճարտարապետա-տեխնիկական անձնակազմ՝ հերթափոխային գրաֆիկով:

Ամենաձանրաբեռնված հերթափոխով աշխատող մարդկանց թիվը կազմելու է 27 մարդ: Աշխատելու են 6 օր՝ 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով:

Շահագործման ընթացքում համալիրի հնարավոր առավելագույն աշխատողների քանակը կազմելու է 35 մարդ: Շինարարության ընթացքում առաջանալու են բնակիչների տեղաշարժի ժամանակավոր անհարմարություններ, որոնք հնարավոր է կանխարգելել կառավարման պլանով նախատեսված միջոցառումների կատարման միջոցով:

Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակում կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտում չի նախատեսվում:

Սառնարանային համալիրի կառուցման ընթացքում բացվելու են նոր աշխատատեղեր:

- նոր աշխատատեղերը նպաստելու են համայնքի ու շրջակա բնակավայրերի բնակչության եկամուտների ավելացմանը,

- բնակչության զբաղվածության աճին:

Շինարարության փուլում հնարավոր սոցիալական խնդիրներից խուսափելու համար նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները կատարվելու են սահմանված ժամերին՝ ցերեկը,

- բացառվելու են շինհրապարակից դուրս աղբի և մեքենաների կուտակումները,

- գործելու է բողոքների արձագանքման ընթացակարգը:

3.11 ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿԱՆԱԶԱՊԱՏՈՒՄ

Լանդշաֆտ. նախատեսվող գործունեության իրականացման տարածքներում (ազդեցության գոտում) լանդշաֆտի վրա վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում, քանի որ գործունեությունն իրականացվելու է կառուցապատված տարածքում:

Շինարարության փուլում նախատեսված շինարարական աշխատանքների ազդեցությունը բնական լանդշաֆտի վրա կլինի նվազագույն՝ կրելով սահմանափակ և կարճատև բնույթ: Դրանք հնարավոր կլինի նվազեցնել շինարարության փուլում՝ բնապահպանական կառավարման պլանով նախատեսված միջոցառումների արդյունքում:

Բարեկարգում. շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.

- շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են և հեռացվելու են տարածքից,

-շինարարական հրապարակը մաքրվելու է թափոններից,

-կատարվելու են գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:

Նախատեսվող կանաչապատման տարածքի մակերեսը կազմելու է շուրջ 520.0քմ: Կանաչապատման համար անհրաժեշտ հողաբուսական շերտի ծավալը կկազմի 52.0իսմ, որը շինարարության հողային աշխատանքների փուլում հավաքվելու և պահեստավորվելու են ՀՀ կառավարության 02.11.2017թ-ի թիվ 1404-ն որոշման պահանջներին համապատասխան:

Կանաչապտում. գործունեության ենթակա ազատ տարածքի վրա նախատեսվում է կատարել որոշակի կանաչապատման աշխատանքներ՝ խոտածածկի և ծաղիկների տեսքով: Դրանք ձեռք կբերվեն այգեգործական մասնագիտական խանութներից:

Կանաչապատ տարածքի համար ոռոգումը կատարվելու է գործունեության տարածքից 30մ հեռավորության վրա գտնվող համայնքային նշանակության գոյություն ունեցող ոռոգման ցանցից՝ պայմանագրային հիմունքներով:

Կանաչապատ տարածքի ոռոգումը կատարվելու է Փ89 վերգետնյա պլաստիկ խողովակներով ցնցուղային եղանակով:

Ոռոգման նպատակով ջրապահանջը որոշվում է ՇՈՒՄ 2.04.02-84-ի համաձայն(1մ² ոռոգման նպատակով անհրաժեշտ է 0,3-0,4լ ջուր), հետևաբար.

$$W = (M \times 0,4) \times m$$

Որտեղ, M – կանաչապատման ենթակա տարածքն է ըստ կանաչապատման տեսակային կազմի,

m – ոռոգման հաճախականությունը կախված սեզոնից և կլիմայական առանձնահատկությունից,

հետևաբար,

$$W = 520 \times 0,4 \times 25 = 5200 \text{լ/ջուր կամ } 5.2 \text{մ}^3/\text{տարի ջուր (տարվա կտրվածքով):}$$

4. ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Մոնիթորինգը՝ ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի և հսկողություն իրականացնող այլ մարմինների կողմից նախատեսվող կանոնավոր հսկողություն է:

Այդ նպատակով նախատեսվում է.

- համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում,
- բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության տեխնիկական վերահսկողություն՝ ամենօրյա ռեժիմով,
- տեխնիկական վերահսկողություն իրականացնող կազմակերպությունը կամ անձը պարտավոր է ժամանակին Պատվիրատուին և/կամ նախագծային կազմակերպությանը տեղեկացնել՝ նկատած անհամապատասխանությունները,
- բոլոր աշխատողներն իրազեկվելու են աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին,
- խստիվ պահպանվելու են շինարարության կանոնները և անձնական պաշտպանության նորմերը,
- հակահրդեհային պահանջների՝ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերին համապատասխանության պահպանում,
- թափոնների տեղափոխում՝ համապատասխան պայմանագրերի հիման վրա,
- կապալառուի կողմից ապահովվելու է նախագծով նախատեսված բոլոր աշխատանքների պատշաճ իրականացումը,
- կատարվելու է ամբարձիչի ժամանակի և բեռնունակության օգտագործման պարբերաբար և դիտողական ստուգում,
- իրականացվելու են շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառվելու նպատակով,

- հարակից շենքերի բնակչության հնարավոր բողոքների դեպքում կիրականացվեն աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ,

- շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը կատարվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում,

- նշանակվելու է արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում,

- պահպանվելու է շինարարության իրականացման ժամանակացույցը,

- ապահովվելու է բարեկարգման և կանաչապատման աշխատանքների իրականացումը:

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար նախատեսված ծախսերը կազմում է տարեկան մոտ 150,0 հազար դրամ, ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կներդրվի բողոքների արձագանքման մեխանիզմ (ԲԱՄ), որը հիմնականում ուղղված կլինի շահագրգիռ կողմերի և ազդակիր հասարակության կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ դժգոհությունների ստացմանը, գնահատմանն ու լուծմանը:

Շինարարական բոլոր տեղամասերում ապահովվելու է կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը:

5. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ (ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ) ՊԼԱՆ

Շինարարության փուլ

1	Օդային ավազան	Օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով նախատեսվում է.
2	Հողային ռեսուրսներ	- շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում անհրաժեշտության դեպքում կատարվելու է գրունտի խոնավեցում և ճանապարհների
3	Ջրային ռեսուրսներ	ջրցան,
4	Թափոններ	- մեքենաները շին. հրապարակ մտնելու և դուրս գալու են մաքուր վիճակում, - օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են
5	Աղմուկ և թրթռում	միայն սարքին վիճակում,
6	Արտակարգ իրավիճակներ	- բացառվելու են անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: Այդ նպատակով իրականացվելու են պարբերաբար ստուգումներ, - գործունեության վայր շինանյութերի և սորուն նյութերի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով, - շինհրապարակում սորուն նյութերը պահվելու են ժամանակավոր ծածկի տակ, ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով, - շինհրապարակը կազմակերպվելու է ցանկապատով և անթափանց թաղանթով, - բացառվելու է տարածքում թափոնների բաց այրումը: Հողային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի և թափոնների ներթափանցումը կանխելու նպատակով նախատեսվում է. - շինարարական աշխատանքների ընթացքում հողային գրունտն օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով, - հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է

		<p>շինհրապարակում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,</p> <ul style="list-style-type: none"> - շինհրապարակն ապահովված է լինելու արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար, - շինարարական նյութերը տեղադրվելու են հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա, - նվազագույնի է հասցվելու շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը, - շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարվելու է տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում, - մեքենաների անիվների լվացումը կատարվելու է անիվների լվացման սարքի միջոցով: Բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարվելու է մինչ շինհրապարակից վերջիններիս դուրս գալը: <p>Գործունեության իրականացման ընթացքում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են.</p> <ul style="list-style-type: none"> - փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր, - տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացման արտադրական հոսքաջրերը հեռացվելու են բիոզուգարան, - շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կետերում, - անձրևաջրերը և շինարարական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող 1*1.5մ չափերի պարզարան, - պարզարանում մեխանիկական նստեցման հետևանքով առաջացած տիղմը՝ որպես շինաղբ, ժամանակ առ ժամանակ տեղափոխվելու է աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով, - շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում,
--	--	---

		<ul style="list-style-type: none"> - ջրցանման համար օգտագործվելու է միայն տեխնիկական որակի ջուր: Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվելու է. - շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում առկա բիոզուգարանից, - բիոզուգարանի մաքրումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմքունքներով: Թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է. - շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ է պահվելու թափոնների կուտակումներից, - շին հրապարակի տարածքում հստակեցվելու է շին աղբի նախնական կուտակման վայրը, - շինարարական թափոնները՝ շինաղբ, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, - շինաղբի տեղափումը կատարվելու է փակ ծածկով ապահովված բեռնատարներով, - կենցաղային աղբի և շինաղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության, - շինարարության փուլում կենցաղային աղբը հավաքվելու է տարածքում տեղադրված աղբարկղերի մեջ և հատուկ աղբահավաք ծառայությունների կողմից մեքենաներով տեղափոխվելու է նախատեսված աղբավայր, - բացառվելու է աղբի կուտակումը շիհրապարակից դուրս՝ այլ բնակելի և հասարակական տարածքներում, - շինարարական նյութերի մնացորդները (մետաղական մասեր) և վտանգավոր նյութերը և թափոնները հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից: Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.
--	--	---

		<ul style="list-style-type: none"> - շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին, - տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործվելու են սարքին վիճակում, - պարբերաբար ստուգվելու և կարգաբերվելու են տրանսպորտային միջոցների շարժիչները, - բացառվելու են շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ, - օգտագործվող շին տեխնիկան և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով, - աղմուկի, վիբրացիայի թույլատրելի նորմերի պահպանում: <p>Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվելու են.</p> <ul style="list-style-type: none"> - շինհրապարակն ապահովված է լինելու հակահրդեհային հիդրատներով, կրակմարիչներով և շանթարգելներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով, հակահրդեհային միջոցառումների վահանակներով, - շինհրապարակը ժամանակ առ ժամանակ մաքրվելու է հրդեհավտանգ և պայթուցավտանգ թափոններից, - տեղադրվելու են համապատասխան տարողության ջրի բաք՝ հրդեհաշիջման նպատակով, - մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են, - տեղադրվելու են ձայնային ազդանշաններ՝ վթարների կանխարգելման համար, - հեղուկ և վտանգավոր նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար: - արտաքին լուսավորության, օդափոխության համակարգերով, տեսախցիկներով, - ավտոմատ հակահրդեհային ազդանշանային համակարգերով՝ հակահրդեհային հիդրատներով, կրակմարիչներով:
--	--	--

		<ul style="list-style-type: none"> - հրդեհի ազդանշանի դեպքում՝ տարածքների օդափոխության համակարգերի անջատում: Աշխատողների աշխատանքի կազմակերպման և անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է. - պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, - պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-0 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները, - մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, - շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացվելու են 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան, աշխատողներն ունենալու են համապատասխան բանվորական արտահագուստ, - աշխատողներն ապահովված են լինելու 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ և այլն), էլեկտրական սարքավորումների հետ աշխատողները՝ դիէլեկտրիկ գորգով և ձեռնոցներով, - աշխատողների համար նախատեսվելու է սանիտարական և հանգստի պայմաններ (տնակ, հանդերձարան և այլն), որն ապահովված է լինելու անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան, ջեռուցիչ և այլն), - շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրվելու են աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, ճանապարհային երթևեկության արգելող նշաններ, - վերահսկվելու է աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառվելու է գործնության վայրում խոտանված բեռնիչ սարքերի կուտակումները, - վերահսկվելու է մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառվելու են մեքենաների կուտակումները,
--	--	--

		<ul style="list-style-type: none"> - նվազագույնի են հասցվելու ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով, - ավտոմեքենաները շինհրապարակից դուրս են գալու միայն մաքուր վիճակում՝ շրջակա տարածքը չաղտոտելու նպատակով, - բացառվելու է ավտոամբարձիչի սլաքի աշխատանքը՝ սահմանազատված սահմանից դուրս, - բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ օգտագործվող բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին, - տեղադրվելու են լրացուցիչ լուսավորման սարքերի՝ շինհրապարակի լուսավորության համար: - Արտադրամասի կառուցման ընթացքում բացվելու են նոր աշխատատեղեր, - նոր աշխատատեղերը նպաստելու են համայնքի ու շրջակա բնակավայրերի բնակչության եկամուտների ավելացմանը, Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում. - շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են և հեռացվելու են տարածքից, - շինարարական հրապարակը մաքրվելու է թափոններից, - կատարվելու են գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:
--	--	--

Շահագործման փուլ

1	Օդային ավազան	Օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով նախատեսվում է.
2	Հողային ռեսուրսներ	- տրանսպորտային աշխատանքների ընթացքում նվազագույնի հասցնել փոշու արտանետումները,

3	Ջրային ռեսուրսներ	- ճանապարհների շահագործման ընթացքում կատարվելու է գրունտի խոնավեցում և
4	Թափոններ	ճանապարհների ջրցան, - մեքենաները սառնարանային հրապարակ մտնելու և դուրս գալու են մաքուր վիճակում,
5	Աղմուկ և թրթռում	- օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում,
6	Արտակարգ իրավիճակներ	- բացառվելու են անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը: Իրականացվելու են պարբերաբար ստուգումներ, - բացառվելու է տարածքում թափոնների բաց այրումը: Հողային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի և թափոնների ներթափանցումը կանխելու նպատակով նախատեսվում է. - սառնարանային տարածքը ապահովված է լինելու արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար, - բեռները տեղադրվելու են հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա, - օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարվելու է տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում, Գործունեության իրականացման ընթացքում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են. - փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր, - տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կետերում, Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվելու է. - աշխատողներն օգտվելու են տարածքում առկա բիոզուգարանից, - բիոզուգարանի մաքրումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմքունքներով:

		<p>Թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ է պահվելու թափոնների կուտակումներից, - թափոնները կհավաքվեն անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, - աղբի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկով ապահովված բեռնատարներով, - կենցաղային աղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության, - բացառվելու է աղբի կուտակումը նախատեսված տարածքից դուրս՝ այլ բնակելի և հասարակական տարածքներում, - վտանգավոր նյութերը և թափոնները հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և հեռացվելու են Կապալառու կազմակերպությունների կողմից: - տրանսֆորմատորի տեղադրման վայրի հատակը բետոնապատ է՝ հնարավոր յուղային հոսքը հողային, ջրային ռեսուրսներ կանխելու համար, - անհրաժեշտության դեպքում ենթակայանի վերանորոգումը կատարվելու է «ՀԷՅ» ՓԲԸ-ի մասնագետների կողմից՝ պայմանագրային հիմունքներով, - հալոգեններ, դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղերը հավաքվելու է համապատասխան տարրաների մեջ և հանձնվելու է մասնագիտացված վերամշակող կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով: - հնարավոր արտահոսքերի դեպքում կիրառվելու են spill kit կոչված ներծծիչ կտորները, որոնք հնարավորություն են տալիս արագ ներծծելու յուղային զանգվածը, - աղտոտված լաթերը հանձնվելու են թափոնների ջերմային վնասագերծում կատարող կազմակերպություններին կամ 1/10 հարաբերությամբ խառնվում են կենցաղային աղբին և տեղափոխվում են աղբավայր: <p>Աշխատանքի ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով</p>
--	--	--

		<p>նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին, - տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործվելու են սարքին վիճակում, - պարբերաբար ստուգվելու և կարգաբերվելու են տրանսպորտային միջոցների շարժիչները, - օգտագործվող տեխնիկան և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով, - աղմուկի, վիբրացիայի թույլատրելի նորմերի պահպանում: <p>Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվելու են.</p> <ul style="list-style-type: none"> - արտադրամասն ապահովված է լինելու հակահրդեհային հիդրատներով, կրակմարիչներով և շանթարգելներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով, հակահրդեհային միջոցառումների վահանակներով, - արտադրամասը ժամանակ առ ժամանակ մաքրվելու է հրդեհավտանգ և պայթուցավտանգ թափոններից, - տեղադրվելու են համապատասխան տարողության ջրի բաք՝ հրդեհաշիջման նպատակով, - մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ արտադրական աշխատանքները դադարեցվելու են, - տեղադրվելու են ձայնային ազդանշաններ՝ վթարների կանխարգելման համար, <p>Մառնարանային համալիրը ապահովված է լինելու.</p> <ul style="list-style-type: none"> - արտակարգ իրավիճակների դեպքում ծառայելու է բնակչության համար որպես ապաստարան, - դիտարկման և վերահսկման էլեկտրոնային համակարգով համաձայն՝ ՀՀ կառավարության 12. 04.2018թ N 426-Ն որոշմամբ սահմանված պահանջների, - էլեկտրամատակարարման ավտոմատ անջատիչներով, վթարային ելքի ցուցանիշներով, հակաձիսային օդափոխության արտածման համակարգերով, - արտաքին լուսավորության, օդափոխության համակարգերով, տեսախցիկներով,
--	--	--

		<ul style="list-style-type: none"> - ավտոմատ հակահրդեհային ազդանշանային համակարգերով՝ հակահրդեհային հիդրատներով, կրակմարիչներով: - հրդեհի ազդանշանի դեպքում՝ տարածքների օդափոխության համակարգերի անջատում: <p>Աշխատողների աշխատանքի կազմակերպման և անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, - պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-0 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները, - մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, - ստուգվելու և ատեստավորվելու են բանվորների գիտելիքները, տեղադրվելու համապատասխան ցուցանակներ, - անվտանգության կանոնների պահպանումն իրականացվելու են 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N 87 արձանագրության պահանջներին համապատասխան, աշխատողներն ունենալու են համապատասխան բանվորական արտահագուստ, - աշխատողներն ապահովված են լինելու 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ և այլն), էլեկտրական սարքավորումների հետ աշխատողները՝ դիէլեկտրիկ գորգով և ձեռնոցներով, - աշխատողների համար նախատեսվելու է սանիտարական և հանգստի պայմաններ (տնակ, հանդերձարան և այլն), որն ապահովված է լինելու անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան, ջեռուցիչ և այլն), - արտադրամասում և հարակից տարածքում տեղադրվելու են աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, ճանապարհային երթևեկության արգելող նշաններ,
--	--	--

		<ul style="list-style-type: none"> - վերահսկվելու է աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառվելու է գործնետության վայրում խոտանված բեռնիչ սարքերի կուտակումները, - վերահսկվելու է մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառվելու են մեքենաների կուտակումները, - նվազագույնի են հասցվելու ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով, - ավտոմեքենաները արտադրամասից դուրս են գալու միայն մաքուր վիճակում՝ շրջակա տարածքը չաղտոտելու նպատակով, - բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ օգտագործվող բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին, - տեղադրվելու են լրացուցիչ լուսավորման սարքեր՝ լուսավորության համար: - Համալիրի շահագործման ընթացքում բացվելու են նոր աշխատատեղեր, - նոր աշխատատեղերը նպաստելու են համայնքի ու շրջակա բնակավայրերի բնակչության եկամուտների ավելացմանը,
--	--	---

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ (ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ) ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

h h	Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Մոնիթորինգի Վայրը	Իրականացման ձևը	Ժամանակամիջոց	Մոնիթորինգ Կատարող/ Վերահսկող
1	Շինարարության ընթացքում օդային ավազան, ջրային և հողային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի և կեղտաջրերի ներթափանցման բացառելուն ուղղված	- Փոշու և այլ օդի աղտոտիչների արտանետումների, աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ, - ջրային և հողային ռեսուրսների որակի ուսումնասիրություններ ի կատարում, - կեղտաջրերի հեռացման՝ բիոզուգարանի տեղադրում	Գործունեության ենթակա տարածքում	Ստուգայցեր, գործիքային ստուգումներ	Շինարարության փուլում՝ ամենօրյա պարբերաբար	Կապալառու Ձեռնարկող
2	Արտակարգ իրավիճակներ և աշխատանքի	- Աշխատողների իրազեկում՝ աշխատանքի	Գործունեության իրականացման	Իրազեկումներ և Ստուգումներ	Պարբերաբար	Կապալառու

	<p>անվտանգություն</p>	<p>անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին, -շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն, -բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության տեխնիկական վերահսկողություն՝ -հակահրդեհային պահանջների ապահովում՝ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերին համապատասխան:</p>	<p>ենթակա տարածքում</p>	<p>ստուգայցեր</p>	<p>Ամենօրյա ռեժիմով,</p>	<p>Ձեռնարկող Համապատասխան գերատեսչության տեսչական մարմին</p>
--	------------------------------	---	-------------------------	-------------------	--------------------------	---

3	Նյութեր	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից,	Լիցենզավորված կազմակերպությունների պահեստներ	Մատակարարման ընթացքում	Շինարարության փուլում	Կապալառու Ձեռնարկող
4	Թափոն	Թափոնների կանոնավոր տեղափոխում:	Գործունեության ենթակա տարածքից	համապատասխան պայմանագրերի հիման վրա տեղափոխում	Շինարարության ընթացքում	Կապալառու
5	Շինտեխնիկա և տրանսպորտային միջոցներ	<ul style="list-style-type: none"> - Շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում, - ամբարձիչի ժամանակի և բեռնունակության օգտագործում, - շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղման իրականացում: 	Շինհրապարակ շինհրապարակից դուրս	Սստուգայցեր Դիտողական ստուգումներ, մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:	Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում Պարբերաբար Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում	Կապալառու Ձեռնարկող

6	Կանաչապատում	Վերականգնել և բարեկարգել շրջակա տարածքը:	Գործունեության տարածք	Դիտողական ուսումնասիրություն	Շինարարական աշխատանքների ավարտից հետո	Ձեռնարկող Վերահսկողական մարմիններ
7	Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում բողոքների արձագանքում	Բողոքների, դիմումների առկայություն	Գործունեության վայր	Դիմումների, արձագանքում	Շինարարության ընթացքում	Կապալառու Ձեռնարկող



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՄԱՔ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 26 հոկտեմբերի 2023 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված *անշարժ* գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ԳԱԳԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՍԵՆԻ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Արմավիր, համայնք Փարաքար գյուղ Փարաքար Մերձնվանի խճուղի թիվ 29 արտադրամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Առուվաճառքի պայմանագիր 14.10.2019թ. թիվ 7217, Փարաքար համայնքի ղեկավարի 22.09.2023թ. թիվ 2949

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 04-094-0005-0009.

Մակերեսի չափը (հա)՝ 1.5931

Նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Արդյունաբերական օբյեկտների

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 26102023-04-0004, գաղտնաբառ՝ D9PT3CBN17PT

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝ արտադրական
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	04-094-0005-0009-001	Արտադրամաս	1725.4 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
2	04-094-0005-0009-006	Ավտոտնակ	67.4 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
3	04-094-0005-0009-005	Պահակատուն	17.5 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
4	04-094-0005-0009-007	Արտադրամաս	333.3 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
5	04-094-0005-0009-004	Էլ. ենթակայան	37.3 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
6	04-094-0005-0009-008	պարիսպ	40.5 քմ, 81 խ.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
7	04-094-0005-0009-003	ծածկ	52.4 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
8	04-094-0005-0009-002	ծածկ	344.5 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ


Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԱՐՍԵՆ ՄԱԼԻԱՍՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 26102023-04-0004, գաղտնաբառ՝ D9PT3CBN17PT

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 2/2



ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Ես՝ Գագիկ Արսենի Գրիգորյանս , (անձնագիր AU0406678) հանդիսանալով Արմավիրի մարզ, Փարաքյար համայնք , Մերձավանի խճուղի 29 ինչպես նաև 31 հասցեների սեփականատերը (կադաստրային ծածկագիր 04-094-0005-0009 , 04-094-0005-0002) ունենալով պայմանգիր « Վեոլիա Ջուր » ՓԲԸ հետ և հանդիսանալով բաժանորդ (բաժանորդման կոդ 33-0284-001) տալիս եմ իմ համաձայնությունը վարձակալ «Բեռկուտ 555»ԱԿ-ին ՀՎՀՀ 01801273 վարձակալած տարածք՝ Մերձավանի խճուղի 31 համաստեղ ջուր օգտագործելու վերաբերյալ :

Համաձայնագիրը կնքված է 5 տարի ժամկետով :

Համաձայնեցված է Գագիկ Գրիգորյանի

«Բեռկուտ 555»ԱԿ-ի

ի դեմս նախագահ Արսեն Գրիգորյանի հետ




Ջրաչափի վերատեղադրման սխեմա ՎՋ/Ս- 636

մ.Արմավիր, հ.Փարաբար Մերձավանի
 խճուղի 29 արտադրամաս
(Տարածքի հասցե)

Գազիկ Գրիգորյան
(Անուն, ազգանուն)

098333366
(Հեռախոսահամար)



Գործող խողովակի տրամագիծը, մմ/շունք, տեսակը	d=50մմ, P=1.2մբն. պ/էր
Միացման կետի տեղը	Տարածքի դիմացով անցնող ջրագծից
Միացման տրամագիծը	d=20մմ
Ջրաչափի տրամագիծը, դասը և տիպը	d=15մմ
Այլ պահանջներ	1.Ջրագծի միացման կետը բողմել անփոփոխ 2.Ջրաչափը վերատեղադրել տարածքից դուրս տարածքի դիմաց 3.Ջրաչափի համար կառուցել դիտահոր 4.Բաժանորդային քարտ N.33-0284-001
Ջրամատակարարման գրաֆիկ	Շուրջօրյա

«Շահումյան» տեղամասի պետ՝ *[Signature]* Ա.Օհանյան
 Ինժեներական խմբի պատասխանատու՝ *[Signature]* Գ.Վարդանյան
[Signature]

Կատարող *[Signature]* Ս.Խաչատրյան



Ջուր

Գազիկ Գրիգորյանին
/հասցեն՝ ք. Երևան, Եղբայրության փող. 22/27 /

«23» ապրիլի 2021թ.
N 180710119

Առարկան՝ Պարզաբանում դիմումի վերաբերյալ

Հարգելի պարոն Գրիգորյան,

Ի պատասխան Ձեր դիմումի՝ կից ներկայացվում է Արմավիրի մարզ, գ. Փարաքար, Մերձավանի խճուղի 29 հասցեի ջրագծի վերակառուցման ՎՋ/Ս-636 սխեման, համաձայն որի անհրաժեշտ է կառուցել դիտահոր և կրկին դիմել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ՝ ջրաչափի տեղադրման հարցին ընթացք տալու համար:


Առդիր՝ 1 էջ:

Հարգանքով՝

Գլխավոր տնօրեն

Ս. Շահինյան

Պատասխանատու՝
Լ.Մարտիրոսյան



ՀՀ, ք. Երևան, 375025, Արուսյան 66ա
Հեռ.՝ 1-85, 0-800-00-185, 011-300-185
Էլ. փոստ՝ office@vjur.am
Վեբ-էջ՝ www.veolia.am

RA, Yerevan, 375025, Str. Abovyan 66a
Tel.: 1-85, 0-800-00-185, 011-300-185
E-mail: office@vjur.am
Web site: www.veolia.am



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԱՎԻԻՐԻ ՄԱՐԶ, ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅՆԱԿՈՒԹՅՈՒՆ
 (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳՑԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) N 333 / 15.12.2023թ.

Օբյեկտ Մասնաբանային շինության կառուցում
 (կառուցվող, վերակառուցվող, ուժեղացվող, վերականգնող օբյեկտի անվանումը հսկողը բնորոշումը)
Որակյունության աստիճանը՝ 4-րդ կատեգորիա (շարժը ռիսկայնության՝
 (ՊՊՈՒՄՔ-ում, հիմնարկության աստիճանը կատեգորիան)
Աշխատանքային նախագծային փաստաթղթերի մշակման
 (նախագծման փուլը)
 Հասցեն Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Մերձավանի խճուղի 29
Հողամասի կադաստրային ծածկագիրը՝ 04-094-0005-0009
 (շինարարության կամ փոխարին հասցեն)

Կառուցապատող Գագիկ Արսենի Գրիգորյան
 Առաջադրանքի տրամադրման հիմքերը 1. Կառուցապատողի հայտը, 2. Եսրիզային նախագիծը:
3. Անշարժ գույքի սեփականության վկայականը՝ N 26102023-04-0004:
 (կառուցապատման չափանիշով ՀՀ օրենսդրությանը սահմանված կազմով հողամասն փոխանցում առաջարկ գրված փոփոխման, բարելավման կամ փոխանցման օրենսդրության հետ անվիզիտ անհրաժեշտ փաստաթղթեր)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲԵՆՈՒԹԱԳԻՐԸ

- Հողամասը գտնվում է Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արդարդրական նշանակության հողերի գոտում
 (հողամասը հողեր քաղաքաշինական միջավայրում, որտեղ նախատեսվում և գործնական նշանակությունը)
- Հողամասի չափերը 1.5931 հա
 (հողամասի սահմանները՝ կողորհնառային նշանակմանը մակերևույթի վրա)
- Հողամասի անկա վիճակը ՌեյինՖը՝ աննշան թեքությանը, հողամասում առկա է 1725.4 քմ մակերեսով արդարդրամաս, 67.4 քմ մակերեսով ավտոդրոնակ, 17.5 քմ մակերեսով պահակագրուն, 333.3 քմ մակերեսով արդարդրամաս, 37.3 քմ մակերեսով էլ. ենթակայան, 40.5 քմ մակերեսով պարիսպ, 52.4 քմ մակերեսով ծածկ, 344.5 քմ մակերեսով ծածկ
 (դեղինը քաղաքաշինական շինարարության ենթակառուցվածքային, օգտագործման, նշանակության, հարկային բնույթի, բանաբանը թվ. և այլն)
- Տրամադրության պայմանները Մերձավանի խճուղի
 (մասնաբանների անկախությունը, երկաթուղային տրամադրության մոտեցումները և այլն)
- Ինժեներական ցանցեր և սարքավորումներ Ջերմատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր/
Կից տարածքով անցնող հիմ. հաղորդագծեր
 (նախագծվող հողամասով կամ նրա տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այլ օբյեկտ, անդամային)
- Կից հողամասեր Մերձավանի խճուղի, հարևան մասնավոր սեփականության հողամասեր:
 (կից հողօգտագործողների անվանումը և որակից սահմանները համաձայն ներկայացված տեղեկության)
- Բնության հատուկ պահպանվող և /կամ/ պատմամշակութային հուշարձանների տարածքներ /պահպանական գոտիներ/ չկան
 (հուշարձանի անվանումը, կոորդինատները և այլն)
- Չառնակազմային սահմանափակումներ Հարևան հողամասերի սահմանագրից մինչև 1.0 մ հեռավորությամբ ճակարկներում բացվածքներ, յատկապես, մինչև 3.0 մ հեռավորությամբ ճակարկներում բացվածքները նախատեսված վերնապատմանի տեսքով /ներքևի նիշը հարակից՝ առնվազն 2.0 մ/:
 (սեփական գործող արտադրամաս, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատնտեսաբանային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նշանակման անվանումները, այլ օբյեկտ սեփականությունը)

ՆԱԽԱԳԾՄԱՆ ՊԼԱՆԱՆՏԵՐ

- 0005-0009 կադաստրային ծածկագրով հողամասի սահմաններում:**
 (հիմնով ՀՀ օրենսդրության և նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի պահանջները, առկա բարելավման միջավայրի կառուցողների ուղղակի կամ կառավարչական կողմից կատարվող քաղաքաշինական միջավայրի պայմանները)
- Օբյեկտի հեծավորությունը կարմիր գծից Կառուցապատման գծից ներս
 - Ճածավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) /նետր/ _____
 - Թուլատրոնի վերելանյա մասի բարձրությունը /նետր/ մինչև 8.0 մ
 - Կառուցապատման խտության գործակիցը _____
 - Կառուցապատման տոկոսը մինչև 80%
 (կառուցապատվող/նախագիծ/ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին % -ով)
 - Կանաչապատման տոկոսը առնվազն 20%
 (կանաչապատման մակերեսը հարաբերությունը հողամասի մակերեսին % -ով)
 - Այլ պահանջներ Նախագծի կազմում ներկայացնել, 1. Գրեղակապման գծագիր, Գրեղակապման համար հիմք վերցնել, 2. շինք-շինությունների տեղադրման անկա այն շինությունները, որոնք գրանցված են կադաստրային քարտեզում, 3. շինք-շինությունների տեխնիկական բնութագրերը (ընդհանուր մակերես, կառուցապատման մակերես, կառուցապատման տոկոս, խտություն և այլն)